



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

1959 • 50 • 2009

ՄԵԾ ՊԱԼԱՏ

ՍՔՈՓՓՈԼԱՆ ԸՆԴԴԵՄ ԻՏԱԼԻԱՅԻ (ԹԻՎ 2)
[CASE OF SCOPPOLA v. ITALY (No. 2)]

(Գանգատ թիվ 10249/03)

ՎՃԻՌ

ՍՏԲԱՍԲՈՒՐԳ

17 սեպտեմբերի 2009թ.

*Սույն վճիռը վերջնական է, սակայն կարող է ենթարկվել խմբագրական
փոփոխությունների:*

Translation co-funded
by the European Union



Սույն թարգմանությունը իրականացվել է «Աջակցություն քրեական արդարադատության բարեփոխումներին և եվրոպական չափանիշների կիրառման ներդաշնակեցումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում, որը համաֆինանսավորվում է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի կողմից: Սույն թարգմանության մեջ ներկայացված տեսակետները որևէ կերպ չեն արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

Սքոփոլան ընդդեմ Իտալիայի (թիվ 2) գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, հանդես գալով Մեծ պալատի հետևյալ կազմով՝

Ժան-Փոլ Կոստա [Jean-Paul Costa]՝ *Նախագահ*,
Նիկոլաս Բրազա [Nicolas Bratza],
Փիր Լորենզեն [Peer Lorenzen],
Ֆրանսուա Տուլկենս [Françoise Tulkens],
Ժոզեֆ Զասադեվալլ [Josep Casadevall],
Իռենեու Կաբրալ Բարրետո [Ireneu Cabral Barreto],
Ռեյ Մարուստե [Rait Maruste],
Ալվինա Գյուլումյան [Alvina Gyulumyan],
Դանուտե Յոչիենե [Danutė Jočienė],
Յան Սիկուտա [Ján Šikuta],
Դրագոյուբ Պոպովիչ [Dragoljub Popović],
Մարկ Վիլլիգեր [Mark Villiger],
Ջորջիո Մալինվերնի [Giorgio Malinverni],
Ջորջ Նիկոլաու [George Nicolaou],
Անդրաշ Սայո [András Sajó],
Միրյանա Լազարովա Տրայկովսկա [Mirjana Lazarova Trajkovska]

դատավորներ,

Վիտալիանո Էսպոզիտո [Vitaliano Esposito]՝ *ժամանակավոր (ad hoc)*

դատավոր,

և Մայքլ Օ'Բոյլ [Michael O'Boyle]՝ *Քարտուղարի տեղակալ,*

2009 թվականի հունվարի 7-ին և հուլիսի 8-ին տեղի ունեցած դռնփակ խորհրդակցությամբ,

կայացրեց հետևյալ վճիռը, որն ընդունվեց 2009 թվականի հուլիսի 8-ին:

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Սույն գործը հարուցվել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի («Կոնվենցիա») 34-րդ հոդվածի համաձայն, Իտալիայի Հանրապետության քաղաքացի պրն Ֆրանկո Սքոփոլայի [Franco Scoppola] («դիմումատու») կողմից ընդդեմ Իտալիայի Հանրապետության 2003 թվականի մարտի 24-ին Դատարան ներկայացված գանգատի (թիվ 10249/03) հիման վրա:

2. Դիմումատուին ներկայացրել են Հռոմում գործող փաստաբաններ պրն Ն. Պաոլետտին [N. Paoletti], տկն Ա. Մարին [A. Mari] և տկն Գ. Պաոլետտին [G. Paoletti]: Իտալիայի Հանրապետության կառավարությունը («Կառավարություն») ներկայացրել են ներկայացուցիչ տկն Է. Սպատաֆորան [E. Spatafora] և ներկայացուցչի տեղակալ պրն Ն. Լետտիերին [N. Lettieri]:

3. Դիմումատուն, մասնավորապես պնդել է, որ իրեն ցմահ ազատագրված դատապարտելը խախտել էր Կոնվենցիայի 6-րդ և 7-րդ հոդվածները:

4. Գանգատը հանձնվել է Դատարանի Երկրորդ Բաժանմունքի քննությանը (Դատարանի կանոնակարգի 52-րդ կանոնի 1-ին մաս): 2008 թվականի մայիսի 13-ին այն ճանաչվել է մասնակիորեն ընդունելի տվյալ Բաժանմունքի Պալատի կողմից, որը հանդես է եկել հետևյալ դատավորների կազմով՝ Ֆրանսուա Տուլկենս [Françoise Tulkens], Անտոնելլա Մուլարոնի [Antonella Mularoni], Իռենեու Կաբրալ Բարբետո [Ireneu Cabral Barreto], Դանուտե Յոժենեն [Danutė Jočienė], Դրագոյուբ Պոպովիչ [Dragoljub Popović], Անդրաշ Սայո [András Sajó] և Վիտալիանո Էսպոզիտո [Vitaliano Esposito], ինչպես նաև Սալլի Դոլլե [Sally Dollé]՝ Բաժանմունքի քարտուղար: 2008 թվականի սեպտեմբերի 2-ին Պալատն ընդդատությունը զիջել է Մեծ պալատին: Դիմումատուն չի առարկել ընդդատության զիջմանը. Կառավարությունը նման առարկություն ներկայացնելուց հետո հրաժարվել է դրանից (Կոնվենցիայի 30-րդ հոդված և 72-րդ կանոն):

5. Մեծ պալատի կազմը որոշվել է Կոնվենցիայի 27-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի դրույթների և Դատարանի կանոնակարգի 24-րդ կանոնի համաձայն: Իտալիայից ընտրված դատավոր Վլադիմիրո Չագրեբելսկո [Vladimiro Zagrebelsky] ինքնաբացարկից հետո Կառավարությունը նշանակել է Վիտալիանո Էսպոզիտոյին [Vitaliano Esposito]՝ ժամանակավոր (*ad hoc*) դատավորի կարգավիճակով հանդես գալու համար (Կոնվենցիայի 27-րդ հոդվածի 2-րդ կետ և 29-րդ կանոնի 1-ին մաս):

6. Դիմումատուն և Կառավարությունը յուրաքանչյուրը ներկայացրել են գործի հանգամանքներին վերաբերող հուշագրեր:

7. 2009 թվականի հունվարի 7-ին Ստրասբուրգում գտնվող Մարդու իրավունքների պալատում կայացել են դռնբաց դատական լուսմներ (59-րդ կանոնի 3-րդ մաս):

Դատարան ներկայացել են.

(ա) *Կառավարության անունից՝*

պրն Ն. ԼԵՏՏԻԵՐԻՆ, պետության իրավաբանական ծառայությունից՝
ներկայացուցիչ,

(բ) *Դիմումատուի անունից՝*

պրն Ն. ՊԱՈԼԵՏՏԻՆ՝ փաստաբան,
տկն Ա. ՄԱՐԻՆ՝ փաստաբան,
տկն Գ. ՊԱՈԼԵՏՏԻՆ՝ փաստաբան,

*իրավախորհրդատու,
խորհրդատու:*

Դատարանը լսել է պրն Պաոլետտիի, պրն Լետտիերիի և տկն Մարիի ելույթները և նրանց պատասխանները Դատարանի հարցերին:

ՓԱՍՏԵՐԸ

I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

8. Դիմումատուն ծնվել է 1940 թվականին և ներկայումս գտնվում է ազատազրկման մեջ Պարմայում:

9. 1999 թվականի սեպտեմբերի 2-ին դիմումատուն, երկու որդիների հետ վիճաբանությունից հետո, սպանել է կնոջը և վնասվածքներ պատճառել որդիներից մեկին: Նա ձերբակալվել է սեպտեմբերի 3-ին:

10. Նախաքննության ավարտին Հռոմի դատախազությունը խնդրել է դիմումատուին պատասխանատվության ենթարկել սպանության, սպանության փորձի, սեփական ընտանիքի անդամների նկատմամբ դրսևորած վատ վերաբերմունքի և ապօրինի կերպով հրազեն կրելու համար:

11. 2000 թվականի փետրվարի 18-ին Հռոմի՝ նախաքննության հարցերով մասնագիտացած դատավորի («ՆՀԴ») (*giudice dell'udienza preliminare*) առջև կայացած դատախոսման ժամանակ դիմումատուն խնդրել է իր գործը քննել պարզեցված վարույթի կարգով՝ պարզեցված ընցակարգ, որը դատապարտման դեպքում ենթադրում էր պատժի մեղմացում: Տվյալ ժամանակահատվածում գործող քրեական դատավարության օրենսգրքի («ԲԴՕ») 442-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված էր, որ եթե ամբաստանյալի կատարած հանցագործությունը պատժվում էր ցմահ ազատազրկմամբ, համարժեք պատիժը պետք է լիներ երեսուն տարի ժամկետով ազատազրկումը (տե՛ս 29-րդ պարբերությունը՝ ստորև):

12. ՆՀԴ-ն համաձայնել է քննությունն իրականացնել պարզեցված վարույթի կարգով: Հաջորդ դատախոսները տեղի են ունեցել 2000 թվականի սեպտեմբերի 22-ին և նոյեմբերի 24-ին: Նոյեմբերի 24-ի դատախոսները սկսվել են ժամը 10:19-ին:

13. 2000 թվականի նոյեմբերի 24-ին ՆՀԴ-ն դիմումատուին մեղավոր է ճանաչել և նշել, որ նա ենթակա էր ցմահ ազատազրկման պատժի. սակայն, քանի որ դիմումատուն նախընտրել էր, որ իր գործով դատաքննությունն իրականացվեր պարզեցված վարույթի կարգով, դատավորը նրան դատապարտել է 30 տարի ժամկետով ազատազրկման:

14. 2001 թվականի հունվարի 12-ին դատախազությունը ՆՀԴ-ի 2000 թվականի նոյեմբերի 24-ի դատավճիռը բողոքարկել է Հռոմի վերաքննիչ դատարան՝ բարձրացնելով օրենքի կիրառության հարց: Դատախազությունը պնդել է, որ ՆՀԴ-ն պետք է կիրառած լիներ 2000 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 341 օրենսդրական դեկրետի 7-րդ հոդվածը, որն օրինական ուժի մեջ էր մտել անմիջապես դիմումատուի դատապարտման օրը: Խորհրդարանի կողմից ընդունվելուց հետո թիվ 341 օրենսդրական դեկրետը փոխակերպվել էր 2001 թվականի հունվարի 19-ի թիվ 4 օրենքի:

15. Դատախազությունը մասնավորապես պնդել է, որ թիվ 341 օրենսդրական դեկրետի 7-րդ հոդվածով փոփոխություններ են կատարվել ՔԴՕ-ի 442-րդ հոդվածում և սահմանվել է, որ պարզեցված վարույթի կարգով դատաքնության դեպքում, եթե առկա էր «հանցագործությունների համակցություն» (*concorso di reati*) կամ «շարունակվող հանցագործություն» (*reato continuato*, տե՛ս 31-րդ պարբերությունը՝ ստորև), ցերեկային ժամերին մեկուսացմամբ զուգակցված ցմահ ազատազրկումը փոխարինվում էր ցմահ ազատազրկմամբ: ՆՀԴ-ի կողմից թիվ 341 օրենսդրական դեկրետը չկիրառելը հանգեցրել է «օրենքի կիրառման ակնհայտ սխալի» (*evidente errore di diritto*):

16. 2001 թվականի փետրվարի 5-ին և 22-ին դիմումատուն բողոքարկել է: Նրա հիմնական փաստարկն այն էր, որ ինքը պետք է արդարացվեր այն հիմքով, որ իր վարքագծի մեջ դիտավորություն չէր եղել, կամ որ հանցագործությունների կատարման պահին նա ունակ չէր իր գործողությունների ոչ իրավաչափ բնույթը հասկանալու և դրանք կատարելու դիտավորություն ձևավորելու (*incapacità de intendere e volere*): Որպես այլընտրանք, նա պահանջել է իր նկատմամբ նշանակված պատժի մեղմացում:

17. Հիմք ընդունելով երկու տարբեր ատյաններում երկու բողոքների առկայության հանգամանքը՝ դատախազության՝ օրենքի կիրառությունը վիճարկող բողոքը փոխարինվել է փաստական հանգամանքները և օրենքի կիրառությունը վիճարկող բողոքով և գործը, ըստ ընդդատության, հանձնվել է Հռոմի՝ երդվյալ ատենակալների կազմով հանդես եկող վերաքննիչ դատարանի [Rome Assize Court of Appeal] քննությանը (ՔԴՕ-ի 580-րդ հոդված):

18. 2002 թվականի հունվարի 10-ին Հռոմի՝ երդվյալ ատենակալների կազմով հանդես եկող վերաքննիչ դատարանում կայացել է դռնփակ դատական նիստ: Դիմումատուն ներկա չի գտնվել և դատաքնությունն իրականացվել է նրա բացակայությամբ: Նա պնդել է, որ քանի որ դժվարանում էր քայլել, խնդրել էր, որ իրեն դատական նիստերի դահլիճ տեղափոխեն շտապօգնության կամ համապատասխան հարմարեցված այլ մեքենայով, սակայն, քանի որ բանտի վարչակազմը մերժել էր իր խնդրանքը, նա զրկվել էր վերաքննիչ վարույթին մասնակցելու հնարավորությունից:

19. 2002 թվականի հունվարի 10-ի դատավճռով, որը քարտուղարություն է ի պահ տրվել 2002 թվականի հունվարի 23-ին, երդվյալ ատենակալների կազմով հանդես եկող վերաքննիչ դատարանը դիմումատուին դատապարտել է ցմահ ազատազրկման:

20. Այն նկատել է, որ մինչև թիվ 341 օրենսդրական դեկրետի ուժի մեջ մտնելը, ՔԴՕ 442-րդ հոդվածի 2-րդ մասին այնպիսի մեկնաբանություն էր տրվել, որի համաձայն ցմահ ազատազրկումը, անկախ այն հանգամանքից, թե այն պետք է զուգակցվեր ցերեկային ժամերին մեկուսացմամբ, թե ոչ, ենթակա էր փոխարինման երեսուն տարի ժամկետով ազատազրկմամբ՝

ամենաձանր հանցագործության հետ կապված հանցագործությունների համակցության հաշվառմամբ: Որդեգրելով այդ մոտեցումը՝ ՆՀԴ-ն նշանակել է ամենաձանր հանցագործության համար սահմանված պատիժը՝ քննության առարկա չդարձնելով դիմումատուի՝ ցերեկային ժամերի մեկուսացումը կարգադրելու հարցը՝ նրան մյուս հանցագործությունների կատարման մեղադրաքնով մեղավոր ճանաչելու հիմքով:

21. Այնուամենայնիվ, 2000 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 341 օրենսդրական դեկրետն ուժի մեջ է մտել անմիջապես ՆՀԴ-ի որոշման կայացման օրը: Քանի որ դրանով սահմանված դրույթները դասվում էին դատավարական նորմերի շարքին, այն կիրառելի էր քննության փուլում գտնվող վարույթների նկատմամբ՝ *tempus regit actum* (դատական ակտի նկատմամբ կիրառելի է դրա կայացման պահին գործող օրենքը) սկզբունքի համաձայն: Այնուհետև, երդվյալ ատենակալների կազմով հանդես եկող վերաքննիչ դատարանը նկատել է, որ թիվ 341 օրենսդրական դեկրետի 8-րդ հոդվածի դրույթների համաձայն դիմումատուն կարող էր հրաժարվել իր գործը պարզեցված վարույթի կարգով քննելու միջնորդությունից, և գործով դատաքննությունը կարող էր իրականացվել ընդհանուր վարույթի կարգով: Քանի որ նա այդպես չէր վարվել, առաջին ատյանի դատարանի կայացրած որոշմամբ պետք է հաշվի առնվեր այդ ընթացքում պատիժներ սահմանող դրույթների փոփոխությունը:

22. 2002 թվականի փետրվարի 18-ին դիմումատուն ներկայացրել է վճռաբեկ բողոք: Առաջին հերթին նա պնդել է, որ վերաքննիչ վարույթը պետք է ճանաչվի առոչինչ, քանի որ նա գրկված է եղել վերաքննիչ դատարանում 2002 թվականի հունվարի 10-ի դատական նիստին ամբաստանյալի կարգավիճակով մասնակցելու հնարավորությունից: Վճռաբեկ բողոքի երկրորդ և երրորդ հիմնավորումներում դիմումատուն պնդել է, որ գործով քննություն իրականացրած դատարանները բավարար հիմքեր չեն ներկայացրել ո՛չ նրա կողմից կանխամտածված սպանություն կատարելու մասին որոշման, ո՛չ էլ այն եզրահանգման համար, որ նա գիտակցել է, թե ինչ է անում և հանցագործությունները կատարելիս գործել է դիտավորությամբ: Ի վերջո, նա վիճարկել է ծանրացնող հանգամանքների առկայության վերաբերյալ եզրահանգումը (որ նա գործել էր մակերեսային պատճառներով) և բողոքարկել մեղմացնող հանգամանքները հաշվի առնելու մերժումը:

23. 2002 թվականի հուլիսի 31-ին դիմումատուն վճռաբեկ բողոքը լրացրել է նոր հիմնավորումներով: Նա պնդել է, որ փորձագիտական թարմ կարծիք պետք է տրամադրված լիներ արարքի սուբյեկտիվ կողմի վերաբերյալ այն ժամանակ, երբ կատարվել էին հանցագործությունները և ներկայացրել նոր փաստարկներ ծանրացնող և մեղմացնող հանգամանքների հարցի առնչությամբ: Ի վերջո, նա հայտարարել է, որ իր գործով կիրառման ենթակա պատիժը (ցմահ ազատազրկում զուգակցված մեկուսացմամբ) անհամաչափ էր:

24. 2003 թվականի հունվարի 20-ին քարտուղարություն ի պահ տրված դատավճռով Վճռաբեկ դատարանը մերժել է դիմումատուի բողոքը:

25. 2003 թվականի հուլիսի 18-ին դիմումատուն բացառիկ վերանայման բողոք է ներկայացրել փաստական սխալի հիմքով (ՔԴՕ, հոդված 625ա): Առաջին հերթին նա պնդել է, որ ներպետական դատարանների եզրահանգումն առ այն, որ նրա փոխադրումը վերաքննիչ դատարանի դատական նիստին հնարավոր էր ապահովել սովորական փոխադրամիջոցով, և որ նա շտապօգնության մեքենայի կարիք չուներ, գործում առկա փաստաթղթերի սխալ մեկնաբանման արդյունք էր: Ավելին, նրա, որպես ամբաստանյալի, բացակայությունը դատական նիստից խախտել էր Կոնվենցիայի 6-րդ հոդվածը: Հաջորդիվ դիմումատուն պնդել է, որ 2000 թվականի թիվ 341 օրենսդրական ակտով կատարված փոփոխությունների, և այդպիսով քրեաիրավական նորմի հետադարձ ուժով կիրառման արդյունքում, նրա նկատմամբ նշանակված ցմահ ազատազրկման պատիժը խախտել էր Կոնվենցիայի 7-րդ հոդվածը և արդար դատաքննության սկզբունքները: Նա հայտարարել է, որ դատավարական երաշխիքներից հրաժարվելը, քանի որ նա նախընտրել էր, որ իր գործով դատաքննությունն իրականացվեր պարզեցված վարույթի կարգով, չէր փոխհատուցվել իր նկատմամբ նշանակված պատժի մեղմացմամբ, որը պետությունը խոստացել էր նրա կողմից այդ ընտրությունը կատարելու ժամանակ: Ի վերջո, նա վերահաստատել է, որ ցմահ ազատազրկումը անմարդկային և նվաստացնող պատիժ էր և, որպես այդպիսին, հակասում էր Կոնվենցիայի 3-րդ հոդվածին:

26. 2004 թվականի մայիսի 14-ի դատավճռով, որը քարտուղարություն ի պահ էր տրվել 2004 թվականի հոկտեմբերի 28-ին, Վճռաբեկ դատարանը դիմումատուի բացառիկ վերանայման բողոքը ճանաչել է անընդունելի: Այն նկատել է, որ նա ներպետական դատարանների կողմից թույլ տրված փաստական սխալների վերաբերյալ բողոք չէր ներկայացնում, այլ առավելապես Վճռաբեկ դատարանի իրավական գնահատականը վիճարկելու փորձ էր կատարում:

II. ՎԵՐԱԲԵՐԵԼԻ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Ա. Պարզեցված վարույթը

27. Պարզեցված վարույթը ղեկավարվում է ՔԴՕ 438-րդ և 441-443-րդ հոդվածներով: Դրա հիմքում ընկած է այն կանխավարկածը, որ գործը կարող է հանգուցալուծվել՝ հիմնվելով նախնական դատախոսմաներին ներկայացված գործի նյութերի վրա (*allo stato degli atti*): Գործը պարզեցված վարույթի կարգով քննելու միջնորդությունը կարող է ներկայացվել բանավոր կամ գրավոր ցանկացած պահի մինչև նախնական դատախոսման ընթացքում կողմերի կողմից իրենց դիրքորոշումները ներկայացնելը: Գործը պարզեցված վարույթի կարգով քննելու դեպքում, անցկացվում են դժնփակ դատախոսմաներ և անցում է կատարվում կողմերի բանավոր դիրքորոշումներին. որպես կանոն, նրանք իրենց փաստարկների

հիմքում պետք է դնեն դատախազության կողմից ներկայացված քրեական գործի նյութերում ներառված փաստաթղթերը, սակայն, բացառիկ դեպքերում, բանավոր ապացույցները կարող են թույլատրելի համարվել: Եթե դատավորն ամբաստանյալին մեղավոր է ճանաչում, նշանակված պատժի ժամկետը մեկ երրորդի չափով կրճատվում է (442-րդ հոդվածի 2-րդ մաս): Ներպետական վերաբերելի նորմերը նկարագրված են *Hermi v. Italy* գործով վճռում ([ՄԳ], թիվ 18114/02, §§ 27-28, ՄԻԵԴ 2006-...):

28. *Fera v. Italy* գործով վճռում (թիվ 45057/98, 21 ապրիլի 2005թ.) ևս Դատարանն ամփոփ նկարագրել է այն նորմերը, որոնցով ղեկավարվում էր պարզեցված վարույթը: *Fera-ի* գործի հիմքում ընկած իրադարձությունների ժամանակահատվածում պարզեցված վարույթը հասանելի չէր այն անձանց, ովքեր մեղադրվում էին այնպիսի հանցագործությունների կատարման մեջ, որոնք պատժվում էին ցմահ ազատազրկմամբ: 1991 թվականի ապրիլի 23-ի թիվ 176 վճռով Սահմանադրական դատարանը վերացրել է քրեական դատավարության օրենսգրքով սահմանված այդ նորմը, քանի որ այն դուրս է եկել խորհրդարանի կողմից կառավարությանը վերապահված լիազորություններից՝ այդ հնարավորությունը հասանելի դարձնելով, քրեական դատավարության նոր օրենսգրքի («ԲԴՕ») ընդունման նպատակով:

Բ. 1999 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 479 օրենքով ԲԴՕ 442-րդ հոդվածում կատարված փոփոխությունը

29. 1999 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 479 օրենքով, որը ուժի մեջ է մտել 2000 թվականի հունվարի 2-ին, խորհրդարանը կրկին նախատեսել է այն հնարավորությունը, որով ցմահ ազատազրկման պատժի դատապարտված ամբաստանյալին թույլատրվում էր օգտվել պարզեցված վարույթից: 30-րդ հոդվածով սահմանվում է.

Հոդված 30

«Քրեական դատավարության օրենսգրքի 442-րդ հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

...

(բ) 2-րդ մասը՝ առաջին նախադասությունից հետո, լրացնել հետևյալ [երկրորդ և վերջին նախադասությամբ]. «ցմահ ազատազրկումը փոխարինվում է երեսուն տարի ժամկետով ազատազրկմամբ»:»:

Գ. 2000 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 341 օրենսդրական դեկրետը

30. 2000 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 341 օրենսդրական դեկրետով, որն օրինական ուժի մեջ է մտել անմիջապես նույն օրը և փոխակերպվել 2001 թվականի հունվարի 19-ի թիվ 4 օրենքի, փորձ էր արվում ԲԴՕ 442-րդ

հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությանը յուրօրինակ մեկնաբանություն տալ և այդ մասը լրացվում էր երրորդ նախադասությամբ:

31. «Ցմահ ազատագրվմամբ պատժվող հանցագործությունների վերաբերյալ դատաքնությունների ընթացքում քրեական դատավարության օրենսգրքի 442-րդ հոդվածի 2-րդ մասի և պարզեցված վարույթին վերաբերող նորմերի յուրահատուկ մեկնաբանությունը» վերտառությամբ գլխում թիվ 341 օրենսդրական դեկրետով սահմանվել են 7-րդ և 8-րդ հոդվածները, որոնցով նախատեսվում է.

Հոդված 7

«1. Քրեական դատավարության օրենսգրքի 442-րդ հոդվածի 2-րդ մասի [երկրորդ և] վերջին նախադասության «ցմահ ազատագրվում» բառերը պետք է մեկնաբանվեն որպես ցմահ ազատագրվում՝ առանց ցերեկային ժամերին մեկուսացման:

2. Քրեական դատավարության օրենսգրքի 442-րդ հոդվածի 2-րդ մասի վերջում լրացվում է հետևյալ նախադասությունը՝ «Հանցագործությունների համակցության կամ շարունակվող հանցագործության դեպքում ցերեկային ժամերին մեկուսացմամբ զուգակցված ցմահ ազատագրվումը փոխարինվում է ցմահ ազատագրվմամբ»:»:

Հոդված 8

«1. Սույն օրենսդրական դեկրետի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ քննության փուլում գտնվող քրեական գործերով վարույթներում, որոնցում ամբաստանյալը ենթակա է կամ դատապարտվել է ցերեկային ժամերին մեկուսացմամբ զուգակցված ցմահ ազատագրվման և որոշել է օգտվել պարզեցված վարույթից ..., կարող է սույն օրենսդրական դեկրետը գործողության մեջ դնող օրենսդրության ուժի մեջ մտնելու օրվանից երեսուն օրվա ընթացքում հրաժարվել իր միջնորդությունից: Այդ դեպքում վարույթը վերսկսվում է ընդհանուր վարույթի կարգով այն փուլից, որին վերջինս հասել էր միջնորդությունը ներկայացնելու պահին: Ցանկացած քննչական եզրակացություն, որը հնարավոր է ձեռք բերված լինի, կարող է օգտագործվել քրեական դատավարության օրենսգրքի 511-րդ հոդվածով նախատեսված սահմաններում:

2. Այն դեպքում, երբ, հիմք ընդունելով դատախազության ներկայացրած բողոքը, հնարավոր է կիրառել 7-րդ հոդվածի դրույթները, մեղադրյալը կարող է հրաժարվել 1-ին մասում հիշատակված միջնորդությունից դատախազության ներկայացրած բողոքի մասին իմանալու պահից երեսուն օրվա ընթացքում կամ, եթե նշված բողոքը ներկայացվել է մինչև սույն օրենսդրական դեկրետը գործողության մեջ դնող օրենսդրության ուժի մեջ մտնելը, ապա այդ օրվանից երեսուն օրվա ընթացքում: Կիրառվում են 1-ին մասի երկրորդ և երրորդ նախադասությունների դրույթները ...»

Դ. Քրեական օրենսգրքի 2-րդ հոդվածը

32. 1930 թվականի քրեական օրենսգրքի «Քրեական օրենքների իրավահաջորդությունը» վերտառությամբ 2-րդ հոդվածով սահմանվում է.

«1. Ոչ ոք չի կարող դատապարտվել այնպիսի արարքի համար, որը կատարման պահին գործող օրենքի համաձայն հանցագործություն չի հանդիսացել:

2. Ոչ ոք չի կարող դատապարտվել այնպիսի արարքի համար, որը նոր օրենքի համաձայն հանցագործություն չի հանդիսանում. եթե ամբաստանյալը դատապարտվել է, դատավճռի կատարումը դադարեցվում է, իսկ վերջինիս քրեաիրավական հետևանքները վերացվում:

3. Եթե հանցագործության կատարման պահին գործող օրենքը և հետագայում ընդունված [օրենքները] տարբերվում են, կիրառման ենթակա է այն օրենքը, որով սահմանված դրույթներն առավել բարենպաստ են ամբաստանյալի համար, բացառությամբ այն դեպքի, երբ վերջնական պատիժն արդեն նշանակվել է:

4. Նախորդ [երկու] մասերով սահմանված դրույթները կիրառելի չեն, եթե հետագայում ընդունված օրենքները հատուկ և ժամանակավոր են:

5. Սույն հոդվածով սահմանված դրույթները կիրառելի են նաև, երբ օրենսդրական դեկրետի՝ օրենքի փոխակերպման նկատմամբ կիրառվում են վաղեմության ժամկետներ [*decadenza*] կամ այն տեղի չի ունենում, և երբ օրենսդրական դեկրետը փոխակերպվում է օրենքի՝ փոփոխություններով:»:

Ե. Հրապարակումը Պաշտոնական տեղեկագրում

33. 1923 թվականի հունիսի 7-ի թիվ 1252 թագավորական որոշմամբ նախատեսվում է, որ Պաշտոնական տեղեկագիրը (*Gazzetta ufficiale*) հրապարակվում է Արդարադատության նախարարության կողմից: Որոշման 2-րդ հոդվածով սահմանվում է.

«Հրապարակումը կատարվում է յուրաքանչյուր աշխատանքային օր՝ կեսօրվա ժամերի (*nelle ore pomeridiane*) ընթացքում:»:

34. 1976 թվականի մայիսի 19-ի թիվ 132 վճռով Սահմանադրական դատարանը վճռել է, որ Պաշտոնական տեղեկագրում օրենքի հրապարակումը «կարևոր և որոշիչ պահ» էր օրենքի տեքստի օրինական ուժի մեջ մտնելու համար ձեռնարկված քայլերի շարքում: Ավելին, «Պաշտոնական տեղեկագրում հրապարակում» արտահայտությամբ ենթադրվում էր, որ վերջինս դրվել է շրջանառության մեջ և, ըստ այդմ, հասարակությանը հասանելի դարձվել: Սահմանադրական դատարանը, մասնավորապես նկատել է. ««Պաշտոնական տեղեկագրում» օրենքների հրապարակումը [եզրույթները] [կարող էին] միայն նշանակել... նաև «Պաշտոնական տեղեկագրի» հրապարակումը ... հակառակ դեպքում օրենքների հրապարակման ողջ գործընթացը կիմաստազրկվեր, որը պատմականորեն նախատեսվել էր յուրաքանչյուր անհատի քննարկվող ակտերից տեղեկացված լինելու արդյունավետ հնարավորություն տվող օբյեկտիվ իրավիճակ ստեղծելու համար (*situazione oggettiva di effettiva conoscibilità, da parte di tutti, degli atti medesimi*):»:

III. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏԵՔՍՏԵՐԸ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Ա. «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը

35. «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 15-րդ հոդվածով, որն ընդունվել է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 1966 թվականի դեկտեմբերի 16-ի 2200 ա (XXI) բանաձևով, ուժի մեջ է մտել 1976 թվականի մարտի 23-ին, սահմանվում է.

«1. Ոչ ոք չի կարող մեղավոր ճանաչվել որևէ գործողության կամ թողություն հետևանքով որևէ քրեական հանցագործություն կատարելու մեջ, որը, այն կատարվելու պահին գործող ներպետական օրենսդրության կամ միջազգային իրավունքի համաձայն, չի հանդիսացել քրեական հանցագործություն: Հավասարապես, չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառման էր ենթակա քրեական հանցագործության կատարման պահին: Եթե հանցագործությունը կատարվելուց հետո օրենքով ավելի թեթև պատիժ է սահմանվում, այդ օրենքի գործողությունը տարածվում է տվյալ հանցագործի վրա:

2. Սույն հոդվածում ոչինչ չի խոչընդոտում ցանկացած անձի դատի տալուն կամ պատժելուն ցանկացած արարքի կամ թողություն համար, որոնք կատարվելու պահին ըստ միջազգային հանրության կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքների, հանդիսացել են քրեական հանցագործություն:»:

Բ. «Մարդու իրավունքների մասին» ամերիկյան կոնվենցիան

36. «Մարդու իրավունքների մասին» ամերիկյան կոնվենցիայի 9-րդ հոդվածով, որն ընդունվել է 1969 թվականի նոյեմբերի 22-ին Մարդու իրավունքների միջամերիկյան մասնագիտացած համաժողովի ընթացքում և ուժի մեջ մտել 1978 թվականի հուլիսի 18-ին, սահմանվում է.

«Ոչ ոք չի կարող դատապարտվել այնպիսի գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին գործող օրենքով հանցագործություն չի հանդիսացել: Չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը ենթակա էր կիրառման հանցանք կատարելու պահին: Եթե հանցագործությունը կատարվելուց հետո օրենքով ավելի մեղմ պատիժ նշանակվելու հնարավորություն է սահմանվում, մեղավոր ճանաչված անձը պետք է օգտվի դրանից:»:

Գ. «Հիմնարար իրավունքների մասին» Եվրոպական միության խարտիան և Եվրոպական համայնքների Արդարադատության դատարանի նախադեպային իրավունքը

37. Եվրոպական խորհրդի՝ 2000 թվականի դեկտեմբերի 7-ին Նիցայում կայացած հանդիպման ժամանակ Եվրոպական հանձնաժողովը, Եվրոպական խորհրդարանը և Եվրոպական միության Խորհուրդը

հռչակեցին «Հիմնարար իրավունքներ մասին» Եվրոպական միության խարտիան: Խարտիայի 49-րդ հոդվածով, որն ունի «Հանցագործությունների և պատիժների օրինականության և համաչափության սկզբունքները» վերտառությունը, սահմանվում է.

«1. Ոչ ոք չի կարող մեղավոր ճանաչվել որևէ գործողության կամ անգործության հետևանքով որևէ հանցագործության կատարման մեջ, որը կատարման պահին գործող ներպետական օրենսդրության կամ միջազգային իրավունքի համաձայն հանցագործություն չի հանդիսացել: Հավասարապես, չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը ենթակա էր կիրառման հանցագործության կատարման պահին: Եթե հանցագործության կատարումից հետո օրենքով ավելի մեղմ պատիժ է սահմանվում, այդ պատիժն է ենթակա կիրառման:

2. Սույն հոդվածը չի խոչընդոտում որևէ անձի գործով քննությունը և նրան պատասխանատվության ենթարկելը այնպիսի գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին գործող միջազգային հանրության կողմից ճանաչված ընդհանուր սկզբունքների համաձայն հանդիսանում էր հանցագործություն:

3. Պատիժներն իրենց խստությամբ չպետք է անհամաչափ լինեն հանցագործությանը:»:

38. Berlusconi and Others գործով, Եվրոպական համայնքների Արդարադատության դատարանը որոշել է, որ ավելի մեղմ պատժի հետադարձ ուժով գործողությունն անդամ պետություններին բնորոշ սահմանադրական ավանդույթների մաս էր (տե՛ս C-387/02, C-391/02 և C-403/02 միացված վարույթներով 2005 թվականի մայիսի 3-ի վճիռը): Վճռի վերաբերելի պարբերություններն (§§ 66 to 69) ունեն հետևյալ բովանդակությունը.

«66. Մի կողմ թողնելով տարեկան ֆինանսական հաշվետվությունները չիրապարակելու նկատմամբ Ընկերությունների մասին առաջին հրահանգի 6-րդ հոդվածի կիրառելիության հարցը՝ անհրաժեշտ է նշել, որ Իտալիայի քրեական օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն, որով սահմանվում է ավելի մեղմ պատժի հետադարձ ուժով գործողության սկզբունքը, Իտալիայի քաղաքացիական օրենսգրքի 2621-րդ և 2622-րդ նոր հոդվածները ենթակա են կիրառման, նույնիսկ եթե դրանք օրինական ուժի մեջ են մտել քրեական հետապնդման առարկա հանդիսացած այն արարքների կատարումից հետո, որոնց վերաբերյալ գործերով հիմնական վարույթն արդեն սկսվել է:

67. Այս առնչությամբ պետք է ընդգծել, որ կայուն նախադեպային իրավունքի համաձայն, հիմնարար իրավունքները իրավունքի ընդհանուր սկզբունքների բաղկացուցիչ մաս են կազմում, որոնց պահպանումն էլ երաշխավորում է Դատարանը: Այդ նպատակով Դատարանը ոգեշնչվում է անդամ պետություններին բնորոշ սահմանադրական ավանդույթներից և մարդու իրավունքների միջազգային պայմանագրերով ամրագրված ուղենիշերից, որոնք անդամ պետությունների համատեղ ջանքերի արդյունք են, կամ որոնց նրանք անդամակցում են (տե՛ս, մասնավորապես, Schmidberger-ի գործը, C 112/00 [2003] ECR I 5659, § 71 և դրանում մեջբերված նախադեպային իրավունքը, ինչպես նաև՝ Booker Aquaculture and Hydro Seafood միացված գործերը, C 20/00 և C 64/00 [2003] ECR I 7411, § 65 և դրանցում մեջբերված նախադեպային իրավունքը):

68. Ավելի մեղմ պատժի հետադարձ ուժով գործողության սկզբունքն անդամ պետություններին բնորոշ սահմանադրական ավանդույթների մաս է կազմում:

69. Հետևաբար, նշված սկզբունքը պետք է դիտարկել որպես Համայնքի իրավունքի ընդհանուր սկզբունքների մաս, որոնք ներպետական դատարանները պետք է պահպանեն Համայնքի իրավունքի, իսկ հատկապես քննարկվող գործերով կորպորատիվ իրավունքին վերաբերող հրահանգների կիրարկումն ապահովելու նպատակով ընդունված ներպետական օրենսդրությունը կիրառելիս:»:

39. Արդարադատության դատարանի կողմից հաստատված սկզբունքներն արտացոլվել են Փրանսիայի վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2007 թվականի սեպտեմբերի 19-ի վճռում (թիվ 06-85899 դիմումի մերժում): Վճռի վերաբերելի պարբերություններն ունեն հետևյալ բովանդակությունը.

«... ցանկացած դեպքում, Համայնքի իրավունքի ընդհանուր սկզբունքները գերակա են ներպետական իրավունքի նկատմամբ: 2005 թվականի մայիսի 3-ի վճռում Եվրոպական համայնքների Արդարադատության դատարանը նկատել է, որ ավելի մեղմ պատժի հետադարձ ուժով գործողության սկզբունքն անդամ պետություններին բնորոշ սահմանադրական ավանդույթների մաս է կազմում և, հետևաբար, նշված սկզբունքը պետք է դիտարկել որպես Համայնքի իրավունքի ընդհանուր սկզբունքներից մեկը, որոնք ներպետական դատարանները պետք է պահպանեն Համայնքի իրավունքի կիրարկումն ապահովելու նպատակով ընդունված ներպետական օրենքը կիրառելիս (2005 թվականի մայիսի 3-ի վճռի 68-րդ և 69-րդ պարբերություններ): Հետևաբար, քննարկվող գործում նշված սկզբունքի, որը գերակա էր ներպետական իրավունքի նկատմամբ, խախտում է տեղի է ունեցել, երբ Փարիզի վերաքննիչ դատարանը [մեղադրյալին] դատապարտել է Համայնքի իրավունքի կիրարկումն ապահովելու նպատակով ընդունված ներպետական օրենքի հիմքով՝ ապօրինաբար հաշվի չառնելով ավելի մեղմ պատժի հետադարձ ուժով գործողության սկզբունքը:

... «Զաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 15-րդ հոդվածով, առանց որևէ բացառության, սահմանվում է, որ այն դեպքում, երբ հանցագործությունը կատարվելուց հետո օրենքով ավելի մեղմ պատժ է սահմանվում, հանցագործին դրանից օգտվելու հնարավորություն պետք է տրվի: 1958 թվականի հոկտեմբերի 4-ի Սահմանադրության 55-րդ հոդվածի ուժով այս տեքստը գերակա է Փրանսիական իրավունքի նկատմամբ: Հետևաբար, Փարիզի վերաքննիչ դատարանը չէր կարող հաշվի չառնել պատիժը մեղմացնող նոր օրենքը սոսկ այն հիմքով, որ նշված օրենքով բացահայտ կերպով բացառվում էր օրենքի հետադարձ ուժը՝ ի հակադրություն վերոնշյալ տեքստով ամրագրված սկզբունքի: ...»:

Գ. Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունը

40. Միջազգային քրեական դատարանի կանոնադրության 24-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով սահմանվում է.

«Եթե մինչև գործով վճռի վերջնական դառնալն այդ գործով կիրառելի օրենքում փոփոխություն է կատարվում, հետախուզման մեջ գտնվող, քրեորեն հետապնդվող կամ դատապարտված անձի նկատմամբ կիրառվում է ավելի բարենպաստ օրենքը:»:

Ե. 1991 թվականից ի վեր Նախկին Հարավսլավիայի տարածքում միջազգային մարդասիրական իրավունքի լուրջ խախտումների համար պատասխանատու անձանց քննության հարցերով միջազգային տրիբունալի նախադեպային իրավունքը («ՀՄՔՏ»)

41. *Dragan Nikolic*-ի գործով 2005 թվականի փետրվարի 4-ին կայացված վճռով (թիվ IT-94-2-A), ՀՄՔՏ վերաքննիչ պալատը որոշել է, որ առավել մեղմ քրեական օրենքի (*lex mitior*) կիրառելիության սկզբունքը կիրառվում էր իր կանոնադրության նկատմամբ: Վճռի վերաբերելի հատվածներն (§§ 79-86) ունեն հետևյալ բովանդակությունը.

«79. Դատական պալատը, նախևառաջ, քննության առարկա է դարձրել այն, թե արդյոք *lex mitior* սկզբունքը կիրառելի էր Նախկին Հարավսլավիայում և արդյոք այն Միջազգային տրիբունալի իրավունքի մաս էր, այնուհետև անդրադարձել քննարկվող գործում *lex mitior* սկզբունքի կիրառելիության հարցին:

80. Մեղադրական դատավճռի վիճելի հատվածը Դատական պալատի եզրահանգումն է, որ «*lex mitior* սկզբունքը կիրառվում է միայն այն գործերի նկատմամբ, որոնցում հանցագործության կատարումը և դրան հաջորդած պատժի նշանակումը տեղի են ունեցել միևնույն իրավագործության ներքո» և այն, որ քանի որ այս տրիբունալի իրավագործությունը տարբերվում է ներպետական իրավագործությունից, որի ներքո հանցագործությունները կատարվել են, այդ սկզբունքը կիրառելի չէ: Վերաքննիչ պալատը նշում է, որ սկզբունքի կիրառելիության հարցն իրավագործության հարց չէ. այն առավելապես Միջազգային տրիբունալի կողմից դատապարտմանն առնչվող վերլուծությունը կարգավորող օրենքի նկատմամբ միմյանցից տարբերվող քրեական օրենքների վերաբերելիության և կիրառելիության հարց է:

81. *Lex mitior* սկզբունքը մեկնաբանվում է այն իմաստով, որ մեղադրյալի կատարած հանցագործությանը վերաբերելի օրենքի փոփոխության դեպքում, պետք է կիրառվի նվազ խստություն ունեցող օրենքը: Այս սկզբունքի անքակտելի մաս է, որ դատարանը պետք է կաշկանդված լինի վերաբերելի օրենքով: Մեղադրյալները կարող են օգտվել ավելի մեղմ պատժից միայն այն դեպքում, երբ օրենքը պարտադիր ուժ ունենա, քանի որ նրանց իրավական դիրքորոշումը պաշտպանված կլինի միայն այն դեպքում, երբ նրանց նկատմամբ պարտադիր կերպով կիրառվի պատիժների սահմանափակում: Հետևաբար, *lex mitior* սկզբունքը կիրառելի է միայն այն դեպքում, երբ այն օրենքը, որով Միջազգային տրիբունալը կաշկանդված է, հետագայում փոխվում է ավելի բարենպաստ օրենքով, որը ևս պարտադիր ուժ ունի Միջազգային տրիբունալի համար:

82. Միջազգային տրիբունալն անկասկած կաշկանդված է սեփական կանոնադրությամբ և կանոններով և, հետևաբար, Կանոնների 101(Ա) կանոնով և Կանոնադրության 24-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պատժատեսակներով, որոնց ժամկետը տատանվում է ընդհուպ մինչև դատապարտված անձի կյանքի մնացյալ հատվածը ներառյալ: Վերաքննիչ պալատը նշում է, որ Միջազգային տրիբունալի՝ պատժատեսակներին վերաբերող օրենքներում որևէ փոփոխություն չի եղել:

83. Նախկին Հարավսլավիայում պատժատեսակներն սահմանափակված էին կոնկրետ ժամկետով ազատազրկմամբ: Վերաքննիչ պալատը նկատում է, որ Միջազգային տրիբունալի ստեղծումից ի վեր, Տրիբունալ ներկայացված մեղադրյալի

նկատմամբ կարող է նշանակվել առավելագույն պատիժ, որը սահմանափակված չէ կոնկրետ ժամկետով ազատագրվմամբ:

84. Այդուհանդերձ, Վերաքննիչ պալատը վերահաստատում է իր եզրահանգումն առ այն, որ Միջազգային տրիբունալը, օգտվելով իր գերակա դիրքից, կաշկանդված չէ Նախկին Հարավսլավիայի օրենսդրությամբ կամ պատիժների նշանակման պրակտիկայով: Այն ընդամենը կարող է նշվածը հաշվի առնել: Նախկին Հարավսլավիայի օրենքներում կատարված փոփոխությունների հիմքով Միջազգային տրիբունալի կողմից նշանակվող պատիժների նկատմամբ *lex mitior* սկզբունքի կիրառումը թույլատրելի կնշանակեր, որ Նախկին Հարավսլավիայի պետություններն օժտված են պատիժների նշանակման հարցում Միջազգային տրիբունալի դատավորների հայեցողությունը կասկածի տակ առնելու լիազորությամբ: Պետությունները, Միջազգային տրիբունալի կանոնադրության 2-5-րդ հոդվածներով սահմանված հանցագործությունների համար հնարավորինս մեղմ պատիժներ նախատեսող ներպետական օրենք ընդունելով, կարող էին կանխել այս Տրիբունալի կողմից իրենց քաղաքացիներին համարժեք պատասխանատվության ենթարկելը: Նշվածը համատեղելի չէ Կանոնադրության 9-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված Միջազգային տրիբունալի գերակայության և ընդհանուր առմամբ նրա մանդատի հետ:

85. Ամփոփելով, եթե ճիշտ ընկալենք, *lex mitior* սկզբունքը կիրառվում է Միջազգային տրիբունալի կանոնադրության նկատմամբ: Ըստ այդմ, եթե երբևէ Կանոնադրությամբ ամրագրված պատժի նշանակման լիազորությունները փոփոխության ենթարկվեն, Միջազգային դատարանը պարտավորված կլինի կիրառել նվազ խստության պատժը: Ինչ վերաբերում է 24-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջին, որ «Դատական պալատները պետք է օգտվեն ազատագրվմանն առնչվող պատիժների մասով Նախկին Հարավսլավիայի դատարանների ձևավորած ընդհանուր պրակտիկայից», այս բառերը, որոնք Կանոնադրության բաղկացուցիչ մաս են, անհրաժեշտ է մեկնաբանել Կանոնադրության նկատմամբ կիրառելի մեկնաբանության սկզբունքների լույսի ներքո: Նման մեկնաբանության դեպքում, դրանցով հղում է կատարվում քննարկվող հանցագործության կատարման պահին գործող՝ Նախկին Հարավսլավիայի ցանկացած կիրառելի օրենքի. այդ օրենքներում հետագայում կատարված փոփոխությունները ներառված չեն:

86. Վերոշարադրյալ հիմքերով զանգատի հինգերորդ հիմնավորումը մերժվում է:»:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԳՈՐԾԻ ՇՐՋԱՆԱԿԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ

Ա. Արդյոք Դատարանը կարող է գործը քննել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի լույսի ներքո

1. Կառավարության հարցադրումը

42. Կառավարությունը նախնական հարցադրմամբ վիճարկել է 2008 թվականի մայիսի 13-ի որոշումը, որով Դատարանի Երկրորդ Բաժանմունքը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի լույսի ներքո ներկայացված բողոքը ճանաչել է ընդունելի: Այն նկատել է, որ զանգատը մասնակիորեն ընդունելի ճանաչելու վերաբերյալ 2005 թվականի սեպտեմբերի 8-ի որոշմամբ, Դատարանի Երրորդ Բաժանմունքը նախկինում մերժել է քննարկվող նորմի լույսի ներքո ներկայացված համանման բողոք: Երրորդ Բաժանմունքի հիմնավորումների վերաբերելի հատվածներն ունեն հետևյալ բովանդակությունը.

«Այնուհետև դիմումատուն պնդել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում, որը բաղկացած է երկու բաղադրիչից...: Նա պնդել է, որ վարույթն անարդար էր եղել, քանի որ ինքը դատապարտվել էր պարզեցված վարույթի շրջանակներում և իր բացակայության պայմաններում:

Նա բողոքի առաջին բաղադրիչի մասով նշել է, որ պարզեցված վարույթը նախընտրելու հետևանքով, հրաժարվել էր 6-րդ հոդվածով երաշխավորված որոշ իրավունքներից: Սակայն նա հավելել է, որ հրաժարումը հոժարակամ չէր, այլ պայմանավորված էր ձեռք բերված համաձայնությամբ, որի միակ նպատակը պատժի մեղմացումն էր: Նա պնդել է, որ պատասխանող պետությունը, որը, Եվրոպական դատարանի եզրահանգումների համաձայն, բազմիցս խախտել է ողջամիտ ժամկետի պահանջը, արդարադատության իրականացումը բարեփոխելու փոխարեն ներդրել էր այնպիսի մի համակարգ, որի նպատակը հիմնարար երաշխիքներից հրաժարվող ամբաստանյալներին պարզեցված էր:

Դատարանը նշում է, որ դիմումատուն հենց ինքն էր պարզեցված վարույթի կիրառման միջնորդություն ներկայացրել: Չնայած որ պարզեցված վարույթը նախընտրելը հանգեցնում է դատավարական երաշխիքների թուլացման, դիմումատուն կարող է հրաժարվել ընդհանուր վարույթի երաշխիքներից այն պայմանով, որ հրաժարումը լինի աներկբա, և որ ոչ մի հանրային շահի նկատառում չխոչընդոտի դրան (տե՛ս *Kwiatkowska v. Italy* (dec.), թիվ 52868/99, 30 նոյեմբերի 2000թ.):

Կասկած չկա, որ դիմումատուն տեղյակ է եղել պարզեցված վարույթի կիրառման իր միջնորդության հետևանքների մասին, և որ նա աներկբայորեն հրաժարվել է ընդհանուր վարույթի շրջանակներում երաշխավորված իրավունքներից: Դատարանը

չի համարում, որ պատժի մեղմացման հնարավորությունը նշանակում էր, որ դիմումատուին հարկադրված էր պարզեցված վարույթի կիրառման միջնորդություն ներկայացնել: Ավելին, 2000 թվականի օրենսդրական դեկրետի 8-րդ հոդվածով դիմումատուին՝ ընդհանուր վարույթից հրաժարվելու իր միջնորդությունից հրաժարվելու հնարավորություն էր տրվում: Ի վերջո, հանրային շահի որևէ նկատառում չէր խոչընդոտում նման հրաժարումը:

Հետևաբար, Դատարանը գտնում է, որ այս մասով բողոքն անհիմն է:

...»:

43. Միաժամանակ, Երրորդ Բաժանմունքը որոշել է դիմումատուի ցմահ ազատագրվման դատապարտման մասով ներկայացված բողոքի վերաբերյալ ծանուցել Կառավարությանը՝ բարձրացնելով Կոնվենցիայի 7-րդ հոդվածով ամրագրված սկզբունքներին համահունչ լինելու հարցը («Արդյոք Կոնվենցիայի 7-րդ հոդվածի խախտմամբ դիմումատուի նկատմամբ նշանակվել է ավելի ծանր պատիժ, քան այն, որը ենթակա էր կիրառման հանցանքը կատարելու պահին»): Գանգատը մասնակիորեն ընդունելի ճանաչելու 2005 թվականի սեպտեմբերի 8-ի որոշման եզրափակիչ մասն ունի հետևյալ բովանդակությունը.

«Վերոգրյալի հիման վրա Դատարանը միաձայն՝

հետաձգում է Կոնվենցիայի 7-րդ հոդվածի հիման վրա ներկայացված բողոքի քննությունը,

ճանաչում է զանգատի մնացած մասն անընդունելի:»:

44. Սակայն, ընդունելիության վերաբերյալ 2008 թվականի մայիսի 13-ի վերջնական որոշմամբ Երկրորդ Բաժանմունքը նշել է.

«Դատարանը, նախևառաջ նկատում է, որ դիմումատուի կողմից ներկայացված բողոքները չեն վերաբերում բացառապես Կոնվենցիայի 7-րդ հոդվածով ամրագրված «չկա պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (*nulla poena sine lege*) սկզբունքի ենթադրյալ խախտմանը, այլև առնչվում են այն հարցին, թե արդյոք 2000 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 341 օրենսդրական դեկրետով սահմանված դրույթներով խախտվել էին Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության սկզբունքները: ...

Կողմերի ներկայացրած բոլոր փաստարկների լույսի ներքո Դատարանը գտնում է, որ այս բողոքներով բարձրացվում են փաստի և իրավունքի լուրջ հարցեր, որոնց վերաբերյալ հնարավոր չէ որոշում կայացնել զանգատի քննության այս փուլում, և դրանք ենթակա են ըստ էության քննության. հետևաբար, նշված բողոքները չեն կարող Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով ակնհայտ անհիմն ճանաչվել: Անընդունելիության որևէ այլ հիմք չի հայտնաբերվել»:

45. Կառավարությունը պնդել է, որ վերոշարադրյալ երկու որոշումները հակասում էին միմյանց, քանի որ 6-րդ հոդվածի համաձայն ներկայացված բողոքն առ այն, որ դիմումատուին դատապարտվել էր պարզեցված վարույթի կարգով, մերժվել էր անբողոքարկելի որոշմամբ, որն անկասկած անհամատեղելի էր «արդյոք 2000 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 341 օրենսդրական դեկրետով սահմանված դրույթներով խախտվել էին արդար

դատաքննության սկզբունքները» հարցը քննարկելու Դատարանի մտադրության հետ: Ավելին, մինչև ընդունելիության վերաբերյալ որոշում կայացնելը, Դատարանի Քարտուղարության կողմից Կառավարությանը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահպանման առնչությամբ հատուկ հարցեր չեն հասցեագրվել, ինչի արդյունքում Կառավարությունը գրկվել է քննարկվող բողոքի ընդունելիության և ըստ էության քննության վերաբերյալ մանրամասն դիրքորոշումներ ներկայացնելու հնարավորությունից:

46. Վերոշարադրյալ դիտարկումների լույսի ներքո, Կառավարությունը պնդել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հիմքով ներկայացված բողոքի հանգամանքները ենթակա չեն քննության:

2. Դիմումատուի պատասխանը

47. Դիմումատուն մերժել է Կառավարության ներկայացրած փաստարկը: Նա նկատել է, որ Դատարանը մասնագիտացած էր փաստերին իրավական գնահատական տալու հարցում և կարող էր ներկայացված բողոքները Կոնվենցիայի մեկից ավելի դրույթների լույսի ներքո քննելու որոշում կայացնել:

3. Դատարանի գնահատականը

48. Մեծ պալատը, նախևառաջ, վերահաստատում է, որ իրեն ներկայացված գործերով իր իրավագործության շրջանակն սահմանափակված է ընդունելիության վերաբերյալ Պալատի կայացրած որոշմամբ: (տե՛ս *Perna v. Italy* [ՄԳ], թիվ 48898/99, § 23, ՄԻԵԴ 2003-V և *Azinas v. Cyprus* [ՄԳ], թիվ 56679/00, § 32, ՄԻԵԴ 2004-III): Այս սահմաններում Մեծ պալատը կարող է քննության առարկա դարձնել քննության փուլում գտնվող վարույթի շրջանակներում առաջացող փաստի կամ իրավունքի ցանկացած հարց (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Philis v. Greece (no. 1)*, 27 օգոստոսի 1991թ., § 56, Շարք Ա թիվ 209 և, *Guerra and Others v. Italy*, 19 փետրվարի 1998 թ., § 44 (*in fine*), *Վճիռների և որոշումների մասին զեկույցներ* 1998-I):

49. Գանգատը մասնակիորեն ընդունելի ճանաչելու վերաբերյալ 2005 թվականի սեպտեմբերի 8-ի որոշմամբ, Դատարանի Երրորդ Բաժանմունքը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն ներկայացված երեք բողոքները ճանաչել է անընդունելի: Դրանք, մասնավորապես, վերաբերել են՝

(ա) այն փաստին, որ դիմումատուն իր փաստաբանին տեսակցելու հնարավորություն չէր ունեցել այդ նպատակին ծառայող տարածքում,

(բ) այն փաստին, որ դիմումատուն Վերաքննիչ դատարանում դատական նիստին մասնակցելու հնարավորություն չէր ունեցել, և

(գ) դիմումատուի պնդմանը, որ իր կողմից պարզեցված վարույթի ընտրությունը, որը ենթադրում էր դատավարական որոշ իրավունքներից հրաժարում, հոժարակամ չէր եղել:

50. Մեծ պալատը նկատում է, որ ի վերջո վերոնշյալ բողոքներից և ոչ մեկն ընդունելի չի ճանաչվել և այդ առնչությամբ Կառավարության մտավախություններն անհիմն են: Հետևաբար, դիմումատուի՝ արդար դատաքննության իրավունքի այդ բաղադրիչներն իրեն հանձնված «գործի» մաս չեն կազմում:

51. Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ գանգատը մասնակիորեն ընդունելի ճանաչելու վերաբերյալ 2005 թվականի սեպտեմբերի 8-ի որոշմամբ հիշատակվել է նաև 6-րդ հոդվածի համաձայն ներկայացված չորրորդ՝ դիմումատուի ցմահ ազատագրկման դատապարտման փաստին վերաբերող բողոքը: Դատարանի Երրորդ Բաժանմունքը որդեգրել է այն մոտեցումը, որ այդ բողոքը «վերաբերում [էր] նույն հարցին, ինչ Կոնվենցիայի 7-րդ հոդվածին առնչվող բողոքը և, ըստ այդմ, պետք է քննվեր վերջինիս լույսի ներքո»:

52. Այդ իսկ պատճառով, երբ Կառավարությանը գանգատի վերաբերյալ ծանուցում է ուղարկվել, կողմերին առաջարկվել է ներկայացնել դիրքորոշումներ այն հարցի վերաբերյալ, թե արդյոք դիմումատուի ցմահ ազատագրկումը խախտել էր Կոնվենցիայի 7-րդ հոդվածը: Արդյունքում, Կառավարության դիրքորոշմանն ի պատասխան ներկայացված դիրքորոշմամբ դիմումատուն ներկայացրել է արդար դատաքննության սկզբունքների խախտմանը վերաբերող փաստարկներ: Նա, մասնավորապես, պնդել է, որ պարզեցված վարույթը նախընտրելով՝ ինքը պետության հետ համաձայնության է եկել, որի հիմքով հրաժարվել է իրեն տրամադրված դատավարական երաշխիքների մի մասից՝ դատապարտվելու դեպքում ցմահ ազատագրկման փոխարեն երեսուն տարի ժամկետով ազատագրկում նշանակելու դիմաց: Նա պնդել է, որ պետության կողմից համաձայնությունը խախտելն անհամատեղելի էր Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ:

53. Դատարանը նկատում է, որ Կոնվենցիայի 32-րդ հոդվածով սահմանված դրույթների համաձայն, իր իրավագործությունը «[տարածվում է] այն բոլոր հարցերի վրա, որոնք վերաբերում են Կոնվենցիայի և կից Արձանագրությունների դրույթների մեկնաբանմանն ու կիրառմանը, որոնք իրեն հանձնվում են 33-րդ, 34-րդ և 47-րդ հոդվածների դրույթներով նախատեսված դեպքերում», և որ «Դատարանի իրավագործության շուրջ վեճ առաջանալու դեպքում» հարցը լուծում է Դատարանը:

54. Քանի որ Դատարանը մասնագիտացած է գործի փաստերին իրավական գնահատական տալու հարցում, այն չի համարում, որ կաշկանդված է դիմումատուի կամ Կառավարության գնահատականով: Օրինակ՝ «օրենքները հայտնի են դատարանին» (*jura novit curia*) սկզբունքի համաձայն, Դատարանը, սեփական նախաձեռնությամբ, բողոքները քննել է այնպիսի հոդվածների կամ հոդվածների մասերի լույսի ներքո, որոնց վրա կողմերը չեն հիմնվել և նույնիսկ այնպիսի դրույթի իմաստով, որի մասով Հանձնաժողովը գանգատը ճանաչել էր անընդունելի՝ այն ընդունելի համարելով մեկ ուրիշ դրույթի համաձայն: Բողոքը բնութագրվում է դրանում բերված ենթադրյալ փաստերով և ոչ թե միայն դրա հիմքում ընկած

իրավական հիմքերով կամ փաստարկներով (տե՛ս *Powell and Rayner v. the United Kingdom*, 21 փետրվարի 1990թ., § 29, Շարք Ա թիվ 172 և վերևում մեջբերված *Guerra and Others*, § 44):

55. Ուստի, Դատարանի Երկրորդ Բաժանմունքը, նպատակահարմար համարելով քննության առարկա դարձնել այն հարցը, թե արդյոք 2000 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 341 օրենսդրական դեկրետով սահմանված դրույթներով նաև «խախտվել էին Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության սկզբունքները», չի արել ավելին, քան դիմումատուի բողոքին գնահատական տալու իր իրավունքից օգտվելը և այն Կոնվենցիայի մեկից ավելի հոդվածների լույսի ներքո քննելը: Նման վերադրակումը, որով, ի թիվս այլ նկատառումների, հաշվի են առնվել դիմումատուի նոր փաստարկները, չի կարող կամայական համարվել: Ավելին, քանի որ դիմումատուի ցմահ ազատագրկմանը վերաբերող բողոքը երբևէ չէր մերժվել, դրա վրա չի տարածվում այն սկզբունքը, որ զանգատն անընդունելի ճանաչելու որոշումը վերջնական է և անբողոքարկելի:

56. Ի վերջո, ինչ վերաբերում է Կառավարության այն փաստարկին, որ Դատարանում վարույթի մրցակցային բնույթը խախտվել էր (տե՛ս վերևում՝ 45-րդ պարբերություն), հարկ է նշել, որ դիմումատուի դիրքորոշումը և ընդունելիության վերջնական որոշումը կոմունիկացվել էին Կառավարությանը: Ուստի, վերջինս Մեծ պալատին Կոնվենցիայի 6-րդ հոդվածին վերաբերող բողոքի անընդունելի կամ անհիմն լինելու առնչությամբ ցանկացած փաստարկ ներկայացնելու հնարավորություն էր ունեցել: Նշվածի առնչությամբ Մեծ պալատը վերահաստատում է, որ նույնիսկ զանգատն ընդունելի ճանաչելու վերաբերյալ Պալատի որոշումից հետո, այն կարող է քննության առարկա դարձնել դրա ընդունելիությանն առնչվող հարցեր, օրինակ՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 4-րդ կետի (*in fine*) հիմքով, որը Դատարանին լիազորում է «մերժել ցանկացած զանգատ, որն այն անընդունելի է համարում ... վարույթի ցանկացած փուլում», եթե նշվածն անհրաժեշտ է կամ այդ հարցերը միացվել են ըստ էության քննությանը կամ այլ կերպ վերաբերելի են ըստ էության քննության փուլում (տե՛ս *K. and T. v. Finland* [ՄԴ], թիվ 25702/94, §§ 140-141, ՄԻԵԴ 2001-VII և վերևում մեջբերված *Perna*, §§ 23-24): Ուստի, նույնիսկ գործի ըստ էության քննության փուլում, Դատարանի կանոնակարգի 55-րդ կանոնի պահպանմամբ, Մեծ պալատը կարող է վերանայել զանգատն ընդունելի ճանաչելու որոշումը, եթե այն համարում է, որ այն պետք է անընդունելի ճանաչված լիներ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի առաջին երեք կետերով սահմանված հիմքերից մեկով (տե՛ս վերևում մեջբերված *Azinas*, § 32):

57. Հետևաբար, ոչ մի պատճառ չկա, թե ինչու Մեծ պալատը չպետք է իրեն հանձնված գործը քննի նաև 6-րդ հոդվածի դիտանկյունից: Ուստի, Կառավարության նախնական առարկությունը ենթակա է մերժման:

Բ. Արդյոք Դատարանի Երկրորդ Բաժանմունքը իրավասու էր ընդդատությունը զիջել Մեծ պալատին

58. Կառավարությունը նաև պնդել է, որ 2008 թվականի մայիսի 13-ին Երկրորդ Բաժանմունքի կողմից արտահայտված՝ ընդդատությունը Մեծ պալատին զիջելու մտադրությունը դժվար էր համադրել ընդունելիության վերաբերյալ վերջնական որոշման ընդունման հետ: Ավելին, այն պնդել է, որ այդ որոշումը հակասում էր գանգատը մասնակիորեն ընդունելի ճանաչելու որոշմանը և կարող էր «սահմանափակել գործի վերաբերյալ ցանկացած մոտեցում, որը Մեծ պալատը կարող էր որդեգրել»:

59. Դատարանը նկատում է, որ Կոնվենցիայի 30-րդ հոդվածի համաձայն՝ «եթե Պալատի քննության ներքո գտնվող գործը հանգեցնում է Կոնվենցիայի մեկնաբանմանն առնչվող լուրջ հարցի, ... Պալատը կարող է, մինչև իր որոշումը կայացնելը, ցանկացած ժամանակ ընդդատությունը զիջել Մեծ պալատին»: Երբ Դատարանի Երկրորդ Բաժանմունքն արտահայտել է քննարկվող գործի ընդդատությունը զիջելու իր մտադրությունը, այն դեռ որոշում կայացրած չի եղել: Ավելին, Մեծ պալատի խնդիրը չէ վերադառնալ այն հարցին, թե արդյոք գործը հանգեցնում է «Կոնվենցիայի մեկնաբանմանն առնչվող լուրջ հարցի»: Ցանկացած դեպքում անհասկանալի է, թե ինչպես կարող էր գանգատն ընդունելի ճանաչելու որոշումը «սահմանափակել» Մեծ պալատի «գնահատականը»: Այդ առնչությամբ հարկ է ընդգծել, որ ինչպես նշվեց վերևում, Մեծ պալատը կարող է քննության առարկա դարձնել իրեն հանձնված բողոքների ընդունելիությանն առնչվող հարցեր (տե՛ս վերևում՝ 56-րդ պարբերություն): Ի վերջո, եթե Կառավարությունը գտնում էր, որ ընդդատությունը զիջելու առաջարկը ճիշտ չէր, այն կարող էր Կոնվենցիայի 30-րդ հոդվածի (*in fine*) համաձայն առարկել: Սակայն այդպիսի առարկություն ներկայացնելուց հետո այն սեփական նախաձեռնությամբ հրաժարվել է դրանից (տե՛ս վերևում՝ 4-րդ պարբերություն (*in fine*)):

60. Վերոշարադրյալի լույսի ներքո, Դատարանը գտնում է, որ գանգատն ընդունելի ճանաչելու և ընդդատությունը Մեծ պալատին զիջելու վերաբերյալ Երկրորդ Բաժանմունքի որոշումները կայացվել են Կոնվենցիայի ու Դատարանի կանոնակարգի համաձայն և չեն խոչընդոտում գործի հետագա քննությանը:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 7-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

61. Դիմումատուն պնդել է, որ իր ցմահ ազատազարկումը խախտել էր Կոնվենցիայի 7-րդ հոդվածը, որով սահմանվում է.

«1. Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը, կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, քրեական հանցագործություն չի համարվել: Չի կարող նաև նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառելի է եղել քրեական հանցագործության կատարման պահին:

2. Սույն հոդվածը չի խոչընդոտում ցանկացած անձի դատի տալ և պատժել որևէ գործողության կամ անգործության համար, որը կատարվելու պահին, քաղաքակիրթ ազգերի կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքներին համապատասխան, համարվել է քրեական հանցագործություն:»:

Ա. Կառավարության առարկությունն իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու մասին

62. Կառավարությունը վերահաստատել է Պալատին ներկայացված՝ իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու վերաբերյալ իր առարկությունը: Այն պնդել է, որ Վճռաբեկ դատարանում դիմումատուին չի հիմնվել քրեական օրենքի հետադարձ ուժ չունենալու սկզբունքի վրա, այլ ընդամենը հայտարարել է, որ իրեն մեղսագրվող հանցանքների համար կիրառման ենթակա պատիժը ցմահ ազատազրկումը չէր:

1. Պալատի որոշումը

63. Գանգատն ընդունելի ճանաչելու վերաբերյալ 2008 թվականի մայիսի 13-ի իր վերջնական որոշմամբ Դատարանի Երկրորդ Բաժանմունքը մերժել է Կառավարության նախնական առարկությունը՝ դիտարկելով, որ դիմումատուին վճռաբեկ բողոքում վիճարկել էր, որ ցմահ ազատազրկման պատիժը չպետք է կիրառված լիներ նրա նկատմամբ. ավելին, փաստական սխալի հիմքով ներկայացված բացառիկ վերանայման բողոքում նա պնդել էր, որ նշանակված պատիժը խախտել էր Կոնվենցիայի 6-րդ և 7-րդ հոդվածները: Ըստ այդմ, Պալատը վճռել է, որ դիմումատուին, առնվազն բովանդակային առումով, Վճռաբեկ դատարան ներկայացրել էր այն բողոքները, որոնք հետագայում միջազգային մակարդակում ներկայացնելու մտադրություն էր ունեցել, և որ նա օգտվել էր պաշտպանության այն միջոցներից, որոնք համարել էր արդյունավետ:

2. Կողմերի փաստարկները

(ա) Կառավարությունը

64. Կառավարությունը, նախևառաջ, նկատել է, որ գանգատը մասնակիորեն ընդունելի ճանաչելու վերաբերյալ 2005 թվականի սեպտեմբերի 8-ի իր որոշմամբ Երրորդ Բաժանմունքը, ամփոփելով Կոնվենցիայի 7-րդ հոդվածի ենթադրյալ խախտման առնչությամբ դիմումատուի կողմից ներկայացված փաստարկները, արտահայտել է հետևյալ դիրքորոշումը.

«Պնդելով, որ մեղադրանքի կողմը իր գործով նույնիսկ բողոքարկելու լիազորություն չուներ, քանի որ քրեական դատավարության օրենսգրքի 443-րդ հոդվածով նման հնարավորություն նախատեսվում էր միայն մեղադրանքը լրացնելուց հետո Նախաքննության հարցերով մասնագիտացած դատավորի կողմից դատապարտման դեպքում՝ դիմումատուին, որը երդվալ ատենակալների կազմով հանդես եկող

վերաքննիչ դատարանի կայացրած դատավճռի դեմ ներկայացված վճռաբեկ բողոքի հիմքերում չէր ներառել այս կետը, նշել է, որ ի վերջո իր նկատմամբ նշանակվել է այնպիսի պատիժ, որն իր գործով պարզեցված վարույթի կարգով քննություն իրականացնելու համար իր կողմից համաձայնություն տալու պահին նախատեսված չէր»:

65. Կառավարության կարծիքով, դժվար էր հասկանալ, թե ինչպես կարող էր դիմումատուն 7-րդ հոդվածի հիմքով իր բողոքը, «առնվազն բովանդակային առումով», ներկայացրած լինել, եթե նա Վճռաբեկ դատարանին որևէ փաստարկ չէր ներկայացրել այն մասին, որ նրա նկատմամբ նշանակվել էր ավելի ծանր պատիժ, քան այն, որը ենթակա էր կիրառման այն պահին, երբ նա համաձայնություն էր տվել իր գործով դատաքննությունն իրականացնել պարզեցված վարույթի կարգով: Հետևաբար, մերժելով Կառավարության՝ իրավական պաշտպանության միջոցները չսպառելու առարկությունը, Երկրորդ Բաժանմունքը հակասել էր Երրորդ բաժանմունքի կողմից՝ զանգատը մասնակիորեն ընդունելի ճանաչելու որոշմամբ արված եզրահանգմանը:

66. Ավելին, Վճռաբեկ դատարանում դիմումատուի ներկայացրած փաստարկները վերաբերել են նրան մեղսագրվող արարքների բնույթին, դրանց կատարման եղանակին, ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքներին, ինչպես նաև նրա ֆիզիկական և հոգեկան առողջական վիճակին: Այդ հարցերը որևէ առնչություն չունեն 2000 թվականի թիվ 341 օրենսդրական դեկրետի ենթադրյալ անարդարացի կիրառմանը: Նույնը վերաբերում էր փաստական սխալի հիմքով ներկայացված բացառիկ վերանայման բողոքին, որը հիմնականում վերաբերում էր վերաքննիչ վարույթի շրջանակներում դիմումատուի բացակայության պայմաններում դատաքննություն իրականացնելու որոշման ենթադրյալ անօրինականությանը: Մյուս կողմից, Վճռաբեկ դատարանին ներկայացված իր դիտարկումներում նա չէր հիմնվել քրեական օրենսգրքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի վրա, որով սահմանվում է, որ եթե հանցագործության կատարման պահին գործող օրենքը և հետագայում ընդունված օրենքները տարբերվում են, կիրառման ենթակա է այն օրենքը, որն առավել բարենպաստ է մեղադրյալի համար (տե՛ս վերևում՝ 32-րդ պարբերություն):

(բ) Դիմումատուն

67. Դիմումատուն համաձայնել է Պալատի որոշման հետ:

3. Դատարանի գնահատականը

(ա) Ընդհանուր սկզբունքները

68. Դատարանը վերահաստատում է, որ իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառման կանոնի նպատակը պայմանավորվող պետություններին՝ նրանց վերագրվող ենթադրյալ խախտումները կանխելու կամ վերացնելու հնարավորություն ընձեռելն է, մինչև այդ պնդումների Դատարան ներկայացվելը (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Remli v. France*, 23 ապրիլի 1996թ., § 33, Չեկույցներ 1996-II և *Selmouni v. France* [ՄԴ], թիվ 25803/94, § 74, ՄԻԵԴ 1999-V): Այս կանոնի հիմքում ընկած է Կոնվենցիայի 13-րդ հոդվածում (որի հետ այն սերտորեն կապված է) արտացոլված ենթադրությունն առ այն, որ ենթադրյալ խախտման մասով հասանելի է իրավական պաշտպանության արդյունավետ ներպետական միջոց (տե՛ս *Kudla v. Poland* [ՄԴ], թիվ 30210/96, § 152, ՄԻԵԴ 2000-XI): Այսպիսով, նշված սկզբունքի կարևոր ասպեկտն այն է, որ Կոնվենցիայով ամրագրված պաշտպանության մեխանիզմը լրացնում է մարդու իրավունքների պաշտպանության ազգային համակարգերը (տե՛ս *Akdivar and Others v. Turkey*, 16 սեպտեմբերի 1996 թ., § 65, Չեկույցներ 1996-IV):

69. Իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառման կանոնն անհրաժեշտ է կիրառել որոշակի ճկունությամբ և առանց անհարկի ձևականությունների: Միաժամանակ, դրանով, որպես կանոն, պահանջվում է, որ բողոքները, որոնք հետազայում նախատեսվում է ներկայացնել միջազգային մակարդակում, առնվազն բովանդակային առումով և ներպետական օրենքով սահմանված ձևական պահանջների և ժամկետների պահպանմամբ հանձնված լինեն իրավասու ներպետական դատարանների քննությանը (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Fressoz and Roire v. France* [ՄԴ], թիվ 29183/95, § 37, ՄԻԵԴ 1999-I և վերևում մեջբերված *Azinas*, § 38):

70. Սակայն 35-րդ հոդվածով ամրագրված պարտավորությամբ միայն պահանջվում է, որ դիմումատուն սահմանված կարգով օգտագործի իրավական պաշտպանության այն միջոցները, որոնք ամենայն հավանականությամբ արդյունավետ, բավարար և մատչելի կլինեն (տե՛ս *Sofri and Others v. Italy* (dec.), թիվ 37235/97, ՄԻԵԴ 2003-VIII): Կոնվենցիայով, մասնավորապես, պահանջվում է սպառել իրավական պաշտպանության միայն այն միջոցները, որոնք առնչվում են ենթադրյալ խախտումներին և միևնույն ժամանակ հասանելի և բավարար են: Իրավական պաշտպանության տվյալ միջոցների առկայությունը պետք է բավականաչափ որոշակի լինի ոչ միայն տեսականորեն, այլև՝ գործնականում, իսկ դրա բացակայությունը կհանգեցնի պահանջվող մատչելիության և արդյունավետության բացակայությանը (տե՛ս *Dalia v. France*, 19 փետրվարի 1998թ., § 38, Չեկույցներ 1998-I): Ավելին, ըստ

«միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ունեցող կանոնների», կարող են լինել հատուկ հանգամանքներ, որոնցով դիմումատուներն ազատվեն իրենց տրամադրության տակ եղած՝ իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառելու պարտավորությունից (տե՛ս *Aksoy v. Turkey*, 18 դեկտեմբերի 1996թ., § 52, *Հեկոյցներ* 1996-VI): Սակայն, ակնհայտորեն անարդյունավետ չթվացող իրավական պաշտպանության կոնկրետ միջոցի հաջողության հեռանկարների վերաբերյալ պարզապես կասկածների գոյությունն իրավական պաշտպանության միջոցները չսպառելու հիմնավոր պատճառ չէ (տե՛ս *Brusco v. Italy* (dec.), թիվ 69789/01, ՄԻԵԴ 2001-IX և *Sardinias Albo v. Italy* (dec.), թիվ 56271/00, ՄԻԵԴ 2004-I):

71. Ի վերջո, Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսվում է ապացուցման բեռի բաշխում: Եթե Կառավարությունն է բարձրացնում իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու հարցը, այն պարտավոր է Դատարանում ապացուցել, որ այդ միջոցը եղել է արդյունավետ և տվյալ ժամանակահատվածում տեսականորեն ու գործնականում հասանելի. այսինքն՝ այն եղել է մատչելի, դիմումատուին իր բողոքների մասով փոխհատուցում ստանալու հնարավորություն է տվել և երաշխավորել հաջողության հասնելու ողջամիտ հնարավորություն (տե՛ս վերևում մեջբերված *Akdivar and Others*, § 68 և *Sejdovic v. Italy* [ՄԴ], թիվ 56581/00, § 46, ՄԻԵԴ 2006-II):

(բ) Վերոշարադրյալ սկզբունքների կիրառումն սույն գործի նկատմամբ

72. Դատարանը, նախևառաջ, նկատում է, որ ի հակադրություն Կառավարության պնդմանը (տե՛ս վերևում՝ 64-65-րդ պարբերություններ), զանգատը մասնակիորեն ընդունելի ճանաչելու իր որոշմամբ Երրորդ Բաժանմունքը չի կանխորոշել իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառելու հարցը: Ամփոփելով դիմումատուի՝ Կոնվենցիայի 7-րդ հոդվածի լույսի ներքո ներկայացրած փաստարկներ՝ այն ընդամենը կարճ դիտարկում է արել առ այն, որ նրա բողոքի հիմնավորումներում չի ներառվել որևէ փաստարկ հարցի առնչությամբ: Հարկ է նաև նշել, որ, ամեն դեպքում, այն այս բողոքի մասով ծանուցել է Կառավարությանը: Այս որոշմամբ չի հիմնավորվում Կառավարության այն առարկությունը, որ այս բողոքը ենթակա է մերժման Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետից բխող պարտավորությունները չկատարելու պատճառով:

73. Ինչ վերաբերում է իրավական պաշտպանության միջոցների սպառման հարցին, Դատարանը նկատում է, որ առաջին ատյանի դատարանի կայացրած մեղադրական դատավճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքում դիմումատուի հիմնական փաստարկն այն էր, որ ինքը պետք է արդարացվեր այն հիմքով, որ իր վարքագծի մեջ դիտավորություն չէր եղել, կամ, որ հանցագործությունների կատարման պահին նա ունակ չէր իր գործողությունների ոչ իրավաչափ բնույթը

հասկանալու և դրանք կատարելու դիտավորություն ձևավորելու (տե՛ս վերևում՝ 16-րդ պարբերություն): Որպես այլընտրանք, նա պահանջել է իր նկատմամբ նշանակված պատժի մեղմացում: Իր վճռաբեկ բողոքում դիմումատուն բողոք է ներկայացրել առ այն, որ ինքը դատապարտվել է իր բացակայության պայմաններում, կրկնել դիտավորության բացակայությանը և հանցագործության սուբյեկտիվ կողմին առնչվող իր փաստարկները, վիճարկել ծանրացնող հանգամանքը և Վճռաբեկ դատարանին խնդրել հաստատել մեղմացնող հանգամանքների առկայության փաստը (տե՛ս վերևում՝ 22-23-րդ պարբերություններ):

74. Դատարանն այն կարծիքին է, որ դիմումատուն, Իտալիայի օրենսդրությամբ սահմանված ձևական պահանջների պահպանմամբ, ի թիվս այլ բողոքների, ներկայացրել է փաստարկ որպես այն պնդման հիմնավորում, որ իր նկատմամբ նշանակված պատիժն անհամաչափ էր: Մյուս կողմից, նա չի վիճարկել 2000 թվականի թիվ 341 օրենսդրական դեկրետի ենթադրյալ հետադարձ ուժով կիրառման փաստը ո՛չ առաջին բողոքում և ո՛չ էլ վճռաբեկ բողոքում: Կառավարությունն իրավացիորեն մատնանշել է այդ փաստը (տե՛ս վերևում՝ 66-րդ պարբերություն): Ճիշտ է, որ փաստական սխալի հիմքով ներկայացված բացառիկ վերանայման բողոքի շրջանակներում դիմումատուն ներկայացրել է փաստարկներ՝ որպես այն պնդման հիմնավորում, որ թիվ 341 օրենսդրական դեկրետն ի վնաս իրեն կիրառելը խախտել էր Կոնվենցիայի 6-րդ և 7-րդ հոդվածները (տե՛ս վերևում՝ 25-րդ պարբերություն): Այնուամենայնիվ, բացառիկ վերանայման բողոքը հնարավորություն է ընձեռում, որպես ծայրահեղ միջոց, Վճռաբեկ դատարանի ակնհայտ փաստական սխալի հիմքով վերաբացելու այն վարույթը, որով առկա է օրինական ուժի մեջ մտած որոշում: Հետևաբար, այն չէր կարող բավարարել դիմումատուի այն բողոքները, որոնք վերաբերում էին 2000 թվականի թիվ 341 օրենսդրական դեկրետով սահմանված դրույթների և կոնվենցիոն իրավունքների անհամատեղելիությանը (տե՛ս, *mutatis mutandis*, *Çinar v. Turkey* (dec.), թիվ 28602/95, 13 նոյեմբերի 2003թ.):

75. Սակայն, մնում է պարզել, թե արդյոք փաստի կամ իրավունքի հարցեր բարձրացնող բողոքի հիմքերը, որոնց վրա դիմումատուն հավանաբար հիմնվել է ցմահ ազատազրկման հետադարձ ուժով ենթադրյալ կիրառման և վարույթի արդարության վրա ունեցած դրա բացասական հետևանքների առնչությամբ, հաջողության հեռանկար ունեին: Այդ առնչությամբ, 2000 թվականի թիվ 341 օրենսդրական դեկրետն ունեցել է օրենքի ուժ Իտալիայի իրավական համակարգում, և Վերաքննիչ ու Վճռաբեկ դատարանների դատավորները պարտավորված են եղել այն կիրառել իրենց վարույթներում գտնվող գործերով: Հարկ է նաև ընդգծել, որ իտալական համակարգում անհատն անմիջականորեն Սահմանադրական դատարան դիմելու իրավունք չունի. Սահմանադրական դատարան դիմելու հնարավորություն ունի միայն գործն ըստ էության քննող դատարանը՝ կողմի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ: Հետևաբար, այսպիսի բողոքը չի կարող

համարվել իրավական պաշտպանության միջոց, որը Կոնվենցիայի համաձայն անհրաժեշտ է սպառել (տե՛ս *Brozicek v. Italy*, 19 դեկտեմբերի 1989 թ., § 34, Շարք Ա թիվ 167 և *C.I.G.L. and Cofferati v. Italy*, թիվ 46967/07, § 48, 24 փետրվարի 2009թ.):

76. Դատարանը նկատում է, որ Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն կարող էր հիմնվել քրեական օրենսգրքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի վրա, որով սահմանվում է մեղադրյալի համար ավելի բարենպաստ քրեական օրենքի հետադարձ ուժով կիրառման սկզբունքը (տե՛ս վերևում՝ 32-րդ և 66-րդ պարբերություններ): Այնուամենայնիվ, եթե նույնիսկ ենթադրենք, որ այս սկզբունքը կարող էր կիրառվել քրեական դատավարության օրենսգրքով սահմանված դրույթների նկատմամբ, հարկ է նկատել, որ քրեական օրենսգրքի 2-րդ հոդվածն սովորական օրենքով նախատեսված դրույթ է՝ ամրագրված 1930 թվականին ընդունված օրենսգրքով: Իտալիայի օրենսդրության համաձայն՝ ավելի ուշ ընդունված օրենքները, որպես կանոն, կարող են շեղվել ավելի վաղ ընդունված օրենքներից: Կառավարությունը չի առարկել, որ այս կանոնը կիրառելի չէր քննարկվող գործով և չի տրամադրել որևէ բացատրություն առ այն, թե ինչու ավելի ուշ ընդունված օրենքը, ինչպիսին թիվ 341 օրենսդրական դեկրետն էր, չէր կարող իրավաչափորեն շեղված լինել քրեական օրենսգրքի 2-րդ հոդվածից: Ավելին, այն չի ներկայացրել այնպիսի գործերի որևէ օրինակ, որոնցով այդ դրույթը հաջողությամբ կիրառված լիներ դիմումատուի իրավիճակին համանման իրավիճակում: Կառավարությունը նաև չի ապացուցել, որ հնարավոր էր խուսափել թիվ 341 օրենսդրական դեկրետի կիրառումից այն հիմքով, որ այն հակասում էր Կոնվենցիային:

77. Վերոշարադրյալի լույսի ներքո, Դատարանը գտնում է, որ Կառավարությունը չի ապացուցել, որ իրավական պաշտպանության միջոցները, որոնցից դիմումատուն կարող էր օգտվել 2000 թվականի թիվ 341 օրենսդրական դեկրետի կիրառումը բողոքարկելու համար, հաջողության որևէ հեռանկար են ունեցել:

78. Հետևաբար, իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու հիմքով Կառավարության կողմից ներկայացված նախնական առարկությունը չի կարող ընդունվել:

Բ. Բողոքի հանգամանքները

1. Կողմերի փաստարկները

79. Դիմումատուն պնդել է, որ Կոնվենցիայի 7-րդ հոդվածը խախտվել էր երեք տարբեր առումներով, որոնք ամփոփված են ստորև:

(ա) Քրեական օրենքի ենթադրյալ հետադարձ ուժով կիրառումը

(i) Դիմումատուի փաստարկեր

80. Դիմումատուն, նախևառաջ, նշել է, որ Իտալիայի դատարանների նախադեպային իրավունքի համաձայն (Վճռաբեկ դատարան, միացված բաժանմունքներ, *Merletti*-ի գործով 1992 թվականի մարտի 6-ի վճիռ), քրեական դատավարության օրենսգրքի 442-րդ հոդվածը, որով սահմանվում է պարզեցված վարույթի կիրառման դեպքում նշանակման ենթակա պատիժը՝ անկախ ԲԴՕ-ում ներառված լինելուց, քրեական նյութական իրավունքի դրույթ է։ Նա պնդել է, որ ի տարբերություն *Kafkaris v. Cyprus* (թիվ 21906/04, 12 փետրվարի 2008թ.) գործով Մեծ պալատի կողմից քննության առարկա դարձված դրույթների, այս դրույթը չի վերաբերել պատիժների կատարման գործընթացին, փոխարենն այն առնչվել է պատժի նշանակմանը։ Հետևաբար, Կոնվենցիայի 7-րդ հոդվածի իմաստով այն անհրաժեշտ է դիտարկել որպես «քրեական իրավունք»։

81. Դիմումատուն ընդգծել է, որ Հռոմի՝ Նախաքննության հարցերով մասնագիտացած դատավորի առջև վերջին դատախոսները սկսվել են 2000 թվականի նոյեմբերի 24-ին՝ ժամը 10:19-ին (տե՛ս վերևում՝ 12-րդ պարբերություն)։ Դատախոսներից անմիջապես հետո Նախաքննության հարցերով մասնագիտացած դատավորը կայացրել է դատավճիռ։ Նույն օրը թիվ 341 օրենսդրական դեկրետը հրապարակվել է Պաշտոնական տեղեկագրում և մտել օրինական ուժի մեջ։ Պաշտոնական տեղեկագիրը լույս է տեսել կեսօրվա ժամերին (տե՛ս վերևում՝ 33-րդ պարբերություն)։ Այդ հիմքով դիմումատուն պնդել է, որ Նախաքննության հարցերով մասնագիտացած դատավորի կողմից դատավճռի կայացման պահին թիվ 341 օրենսդրական դեկրետը դեռ օրինական ուժի մեջ չէր և նրան հայտնի լինել չէր կարող։

82. Ըստ այդմ, դիմումատուն պնդել է, որ ինքը դարձել էր քրեական օրենքի հետադարձ ուժով կիրառման զոհ, քանի որ ի սկզբանե դատապարտվել էր երեսուն տարի ժամկետով ազատազրկման, իսկ այնուհետև՝ ցմահ ազատազրկման՝ թիվ 341 օրենսդրական դեկրետի ուժով։

(ii) Կառավարության փաստարկները

83. Կառավարությունը մերժել է այդ փաստարկը՝ նկատելով, որ Կոնվենցիայի 7-րդ հոդվածով ընդամենն արգելվում էր քրեական օրենքի հետադարձ ուժով կիրառումը «քրեական հանցագործության կատարման պահի» առնչությամբ։ Այն նկատել է, որ քրեական օրենսգրքի այն դրույթները, որոնցով պատիժներ էին սահմանվում այն հանցանքների համար, որոնց համար դիմումատուն դատապարտվել էր, 1999 թվականի սեպտեմբերի 2-ից՝ դրանց կատարման օրվանից, փոփոխության չէին ենթարկվել։ Այն, մասնավորապես, նշել է, որ քննարկվող հանցագործությունները պատժվում էին ցմահ ազատազրկմամբ՝ զուգակցված ցերեկային ժամերին մեկուսացմամբ, և որ ներպետական

դատարանների կողմից նշանակված պատիժը չէր գերազանցել այդ ժամկետը:

84. 7-րդ հոդվածով սահմանված «պատիժ» եզրույթը քննարկելիս՝ քրեական դատավարության օրենսգրքի դրույթները չպետք է հաշվի առնվեն, քանի որ անտրամաբանական կլիներ անհատին հնարավորության տալ գնահատել այն հանցագործության հետևանքները, որը նա հնարավոր է կատարեր՝ հաշվարկելով պատժի մեղմացումը, որի իրավունքը նա հնարավոր է ունենար, կախված նրա կողմից վարույթի տեսակի ընտրությունից: Նման մոտեցումն անհնարին կդարձներ ՔԴՕ-ում փոփոխություններ կատարելը: «Չկա հանցագործություն, եթե այն սահմանված չէ օրենքով» (*nullum crimen sine lege*) սկզբունքը վերաբերում էր միայն քրեական նյութական իրավունքի դրույթներին, իսկ դատավարական նորմերը, որպես կանոն, ունեին հետադարձ ուժ՝ ղեկավարվելով «դատական ակտի նկատմամբ կիրառելի է դրա կայացման պահին գործող օրենքը» (*tempus regit actum*) սկզբունքով: Ցանկացած այլ եզրահանգում կհանգեցներ պատժի մեղմացման յուրաքանչյուր դեպքում, երբ ՔԴՕ-ով ամրագրված նորմերն ուժը կորցրած ճանաչվեին կամ փոփոխվեին: Ավելին, ի տարբերություն 6-րդ հոդվածի, որը կիրառվում էր քրեական արդարդատության ոլորտի (ֆրանսերեն տարբերակում՝ «*matière pénale*») նկատմամբ, Կոնվենցիայի 7-րդ հոդվածով հղում էր կատարվում «քրեական հանցագործությանը»: Նշվածը փաստում էր, որ 7-րդ հոդվածը վերաբերում էր միայն քրեական օրենքին, այլ ոչ թե դատավարական կանոններին:

85. Ցանկացած դեպքում դատավարական կանոնները, ի վնաս դիմումատուի, հետադարձ ուժով չէին կիրառվել: Կառավարությունը նկատել է, որ հանցագործությունների կատարման պահին (1999 թվականի սեպտեմբերի 2-ին), ցմահ ազատազրկմամբ պատժվող հանցագործությունների կատարման մեջ մեղադրվելու դեպքում պարզեցված վարույթ կիրառելու միջնորդություն ներկայացնելու հնարավորություն օրենքով չէր նախատեսվում: Այդ հնարավորությունը նախատեսվել էր միայն 1999 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ 479 օրենքով: Կոնվենցիայի 7-րդ հոդվածով ամրագրված սկզբունքի նպատակն էր երաշխավորել, որ հանցագործները նախապես տեղյակ լինեին, թե որ արարքները կարող էին հանգեցնել նրանց քրեական պատասխանատվությանը և ինչ պատիժներ կարող էին նշանակվել նրանց նկատմամբ. անընդունելի էր, որ անհատը պետք է նաև հանցագործության կատարման վերաբերյալ որոշումներ կայացնելու հնարավորություն ունենար՝ նկատի ունենալով, թե ինչ կարող էր տեղի ունենալ հետագայում:

(բ) Ավելի մեղմ քրեական օրենքի հետադարձ ուժով կիրառման սկզբունքի ենթադրյալ խախտումը

(i) Դիմումատուի փաստարկը

86. Դիմումատուն պնդել է, որ Կոնվենցիայի 7-րդ հոդվածով երաշխավորվում է ոչ միայն քրեական օրենքի հետադարձ ուժ չունենալը,

այլև «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» Միավորված ազգերի կազմակերպության դաշնագրի 15-րդ, «Հիմնարար իրավունքների մասին» Եվրոպական միության խարտիայի 49-րդ և «Մարդու իրավունքների մասին» ամերիկյան կոնվենցիայի 9-րդ հոդվածներով (տե՛ս վերևում՝ 35-37-րդ պարբերություններ) հստակորեն ամրագրված այն սկզբունքը, որի համաձայն, եթե հանցագործության կատարման պահին գործող օրենքը և հետագայում ընդունված օրենքները տարբերվում են, կիրառման ենթակա է այն օրենքը, որն ավելի բարենպաստ է մեղադրյալի համար: Հետևաբար, Կոնվենցիայի 7-րդ հոդվածը խախտվում էր յուրաքանչյուր այն դեպքում, երբ դատարանները նշանակում էին ավելի ծանր պատիժ, քան այն, որն սահմանված էր հանցագործության կատարման պահից մինչև դատավճռի կայացումն ընկած ժամանակահատվածում ցանկացած պահի գործող օրենքով: Այս կետի առնչությամբ դիմումատուին հղում է կատարել Դատարանի մեծամասնության դիրքորոշմանը չհամընկնող՝ դատավոր Պոպովիչի [Popović] հատուկ կարծիքին՝ կցված *Achour v. France* գործով վճռին ([ՄԳ], թիվ 67335/01, ՄԻԵԴ 2006-..):

87. Նա ընդգծել է, որ քննարկվող գործում քրեական դատավարության օրենսգիրքը՝ 1999 թվականի թիվ 479 օրենքով կատարված փոփոխությունների հաշվառմամբ, 2000 թվականի հունվարի 2-ից սահմանում էր, որ ցմահ ազատազրկմամբ (զուգակցված մեկուսացմամբ կամ առանց դրա) պատժվող հանցանքների դեպքում պարզեցված վարույթի կիրառման պարագայում, այդ պատիժը պետք է փոխարինվեր երեսուն տարի ժամկետով ազատազրկմամբ: Սակայն 2000 թվականի թիվ 341 օրենսդրական դեկրետը փոխել է կիրառման ենթակա պատիժն ի վնաս ամբաստանյալի՝ սահմանելով ցմահ ազատազրկման պատիժ՝ առանց մեկուսացման: Արդյունքում, Գլխավոր դատախազի ներկայացրած վճռաբեկ բողոքի հետևանքով, առաջին ատյանի դատարանում նշանակված պատիժը փոխարինվել է ավելի ծանր պատժով՝ ցմահ ազատազրկմամբ, որը դիմումատուի կողմից իր գործը պարզեցված վարույթի կարգով քննելու համաձայնություն տալու պահին գործող օրենքով սահմանված պատիժ չէր:

88. Դիմումատուին պնդել է, որ «ավելի ծանր պատիժ» սահմանող դրույթը հետադարձ ուժով կիրառելը չէր կարող արդարացվել այն հանգամանքով, որ Իտալիայի խորհրդարանը 2000 թվականի թիվ 341 օրենսդրական դեկրետը նկարագրել էր որպես «յուրահատուկ մեկնաբանություն ունեցող օրենք»: Ցանկացած այլ եզրահանգում անհամատեղելի կլիներ իրավունքի գերակայության սկզբունքի հետ: Ավելին, թիվ 341 օրենսդրական դեկրետով չէր տրամադրվել ՔԴՕ-ի մեկնաբանություն, որով սահմանված նորմերը հստակ էին. նախկինում դրանք մեկնաբանվել էին այն իմաստով, որ «ցմահ ազատազրկում» բառակապակցությունը նշանակել էր ցմահ ազատազրկման ցանկացած պատիժ՝ զուգակցված ցերեկային ժամերին մեկուսացմամբ կամ առանց դրա: Իրականում, խորհրդարանը դիմել է խորամանկության, որպեսզի փոխի պատիժների խստության կանոնները պարզեցված վարույթի կարգով

իրականացվող դատաքննության համատեքստում: Այդ մասին վկայում էին 2000 թվականի թիվ 341 օրենսդրական դեկրետի առնչությամբ՝ վերջինս օրենքի փոխակերպելիս, հնչեցված բազմաթիվ քննադատությունները:

(ii) Կառավարության փաստարկները

89. Կառավարությունը մերժել է այդ փաստարկը: Այն նկատել է, որ ի տարբերություն «Զաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» Միավորված ազգերի կազմակերպության դաշնագրի 15-րդ հոդվածի, Կոնվենցիայի 7-րդ հոդվածով չէր սահմանվում ավելի մեղմ քրեական օրենքի հետադարձ ուժով կիրառման իրավունք:

(գ) Զմահ ազատագրկման պատժի նշանակման հիմքում դրված օրենքի հստակության ենթադրյալ բացակայությունը

(i) Դիմումատուի փաստարկը

90. Դիմումատուն նկատել է, որ եթե Դատարանն ընդուներ Կառավարության փաստարկն առ այն, որ ԶԴՕ 442-րդ հոդվածը՝ 1999 թվականի թիվ 479 օրենքով կատարված փոփոխությունների հաշվառմամբ, պաշտոնական մեկնաբանություն պահանջող հստակ դրույթ չէր, այն պետք է արձանագրեր Կոնվենցիայի խախտում վերաբերելի քրեական օրենքի հստակության և կանխատեսելիության բացակայության հիմքով: Նշվածի ապացույցն այն էր, որ Նախաքննության հարցերով մասնագիտացած դատավորն այն նրա գործով մեկնաբանել էր այն իմաստով, որ որպես համարժեք պատիժ նշանակել էր երեսուն տարի ժամկետով ազատագրկումը, մինչդեռ երդվյալ ատենակալների կազմով հանդես եկող վերաքննիչ դատարանը, օգտվելով Կառավարության տրամադրած «յուրահատուկ մեկնաբանությունից», որոշել էր, որ ցմահ ազատագրկումն էր համարժեք պատիժը:

(ii) Կառավարության փաստարկները

91. Կառավարությունը պնդել է, որ 2000 թվականի թիվ 341 օրենսդրական դեկրետը մեկնաբանության նպատակ հետապնդող օրենք էր, այսինքն՝ օրենք, որի նպատակը ներպետական օրենսդրության այն հակասությունը վերացնելն էր, որի հիմքով ներպետական դատարանները կայացրել էին տարբեր որոշումներ:

2. Դատարանի գնահատականը

(ա) Կոնվենցիայի 7-րդ հոդվածի մեկնաբանությունը Դատարանի նախադեպային իրավունքում

(i) «Չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (*Nullum crimen, nulla poena sine lege*) սկզբունքը

92. Կոնվենցիայի 7-րդ հոդվածով ամրագրված երաշխիքը, որը իրավունքի գերակայության բաղկացուցիչ մաս է, կարևոր տեղ է զբաղեցնում Կոնվենցիայով սահմանված պաշտպանության համակարգում, ինչն ընդգծվում է այն հանգամանքով, որ Կոնվենցիայի 15-րդ հոդվածի լույսի ներքո դրանից որևէ շեղում չի թույլատրվում պատերազմի կամ հանրությանը սպառնացող այլ արտակարգ դրության ժամանակ: Այն պետք է մեկնաբանվի և կիրառվի իր առարկային և նպատակին համահունչ՝ այնպես, որ արդյունավետ երաշխիքներ տրամադրվեն ընդդեմ կամայական հետապնդման, դատապարտման և պատժի (տե՛ս *S.W. v. the United Kingdom* և *C.R. v. the United Kingdom*, 22 նոյեմբերի 1995թ., համապատասխանաբար՝ § 34 և § 32, Շարք Ա թիվ 335-B և 335-C, և վերևում մեջբերված *Kafkaris*, § 137):

93. Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին կետով սահմանվում է ավելին, քան ի վնաս մեղադրյալի քրեական օրենքի հետադարձ ուժով կիրառման արգելքը: Դրանով, ավելի ընդհանրական, ամրագրվում է այն սկզբունքը, որ հանցագործությունը և պատիժը կարող են սահմանվել բացառապես օրենքով (*nullum crimen, nulla poena sine lege*): Թեպետ դրանով, մասնավորապես, արգելվում է գոյություն ունեցող հանցագործությունների շրջանակը տարածել այն արարքների վրա, որոնք նախկինում հանցագործություն չեն համարվել, այն նաև ամրագրում է այն սկզբունքը, որ քրեական օրենքը չպետք է ենթարկվի տարածական մեկնաբանության, օրինակ՝ անալոգիայի, ի վնաս մեղադրյալի (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Coëme and Others v. Belgium*, թիվ 32492/96, 32547/96, 32548/96, 33209/96 և 33210/96, § 145, ՄԻԵԴ 2000-VII):

94. Հետևաբար, հանցանքները և համապատասխան պատիժները պետք է հստակ սահմանվեն օրենքով: Նշված պահանջը բավարարվում է, եթե անհատը դրույթի ձևակերպումից, իսկ անհրաժեշտության դեպքում դրան դատարանների կողմից տրված մեկնաբանության օգնությամբ, կարողանում է հասկանալ, թե որ գործողությունները և անգործությունները կհանգեցնեն իր քրեական պատասխանատվությանը (տե՛ս *Kokkinakis v. Greece*, 25 մայիսի 1993թ., § 52, Շարք Ա թիվ 260-A, վերևում մեջբերված՝ *Achour*, § 41 և *Sud Fondi Srl and Others v. Italy*, թիվ 75909/01, § 107, 20 հունվարի 2009թ.):

95. Հետևաբար, Դատարանը պետք է պարզի, թե արդյոք մեղադրյալի կողմից՝ նրա հետապնդմանը և դատապարտմանը հանգեցրած արարքի կատարման ժամանակ գործել է իրավական նորմ, որով տվյալ արարքը ենթակա է եղել պատժի և արդյոք նշանակված պատիժը չի գերազանցել այդ

նորմով ամրագրված սահմանները (տե՛ս վերևում մեջբերված, *Coëme and Others*, § 145 և վերևում մեջբերված *Achour*, § 43):

(ii) «Պատիժ» եզրույթը

96. Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված «պատիժ» եզրույթը, ինչպես 6-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված «քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ» և «քրեական մեղադրանք» հասկացությունները, ունի ինքնուրույն իմաստ (տե՛ս, մասնավորապես, «քաղաքացիական իրավունքների» մասով՝ *X v. France*, 31 մարտի 1992թ., § 28, Շարք Ա թիվ 234-C, և «քրեական մեղադրանքի» մասով՝ *Demicoli v. Malta*, 27 օգոստոսի 1991թ., § 31, Շարք Ա, թիվ 210): 7-րդ հոդվածով առաջարկվող պաշտպանությունն արդյունավետ դարձնելու համար Դատարանը պետք է ազատ լինի խորությամբ քննություն իրականացնելու և սեփական գնահատականն այն երևույթին տալու հարցում, թե արդյոք կոնկրետ միջոցը քննարկվող նորմի իմաստով բովանդակային տեսանկյունից հանգեցնում է «պատժի» (տե՛ս *Welch v. the United Kingdom*, 9 փետրվարի 1995թ., § 27, Շարք Ա թիվ 307-A):

97. Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին կետի երկրորդ նախադասության ձևակերպումը վկայում է այն մասին, որ պատժի առկայության վերաբերյալ ցանկացած գնահատականի սկզբնակետն այն հարցն է, թե արդյոք քննարկվող միջոցը նշանակվել է «քրեական հանցագործության» համար դատապարտման արդյունքում: Այս մասով այլ կարևոր գործոնները, որոնք կարելի է հաշվի է առնել, խնդրո առարկա միջոցի բնույթն ու նպատակը, ներպետական օրենքով դրան տրված որակումը, միջոցի վերաբերյալ որոշում կայացնելիս և այն կատարելիս կիրառվող գործընթացները և դրա ծանրության աստիճանն են (տե՛ս վերևում մեջբերված *Welch*, § 28):

98. Թե՛ Հանձնաժողովը և թե՛ Դատարանն իրենց նախադեպային իրավունքում տարբերակել են բովանդակային իմաստով «պատիժ» համարվող միջոցը և «պատժի» «կատարմանը» կամ «հարկադիր կատարմանը» վերաբերող միջոցը: Արդյունքում, եթե միջոցի բնույթը և նպատակն առնչվում են պատժի մեղմացմանը կամ պայմանական վաղաժամկետ ազատման պայմանների փոփոխությանը, այն 7-րդ հոդվածի իմաստով «պատժի» մաս չի կազմում (տե՛ս վերևում մեջբերված *Kafkaris*, § 142):

(iii) Քրեական օրենքի կանխատեսելիությունը

99. Անդրադառնալով «օրենքին»՝ 7-րդ հոդվածով հղում է կատարվում այն հասկացությանը, որը Կոնվենցիայով մեջբերվում է այն դեպքերում, երբ օգտագործվում է այդ եզրույթը, հասկացություն, որն ընդգրկում է օրենքները և նախադեպային իրավունքը, ինչպես նաև որից բխում են որակական պահանջներ՝ ներառյալ մատչելիության և կանխատեսելիության պահանջները (տե՛ս վերևում մեջբերված, *Kokkinakis*, §§ 40-41, *Cantoni v. France*, 15 նոյեմբերի 1996թ., § 29, Չեկույցներ 1996-V,

վերևում մեջբերված *Coëme and Others*, § 145 և *E.K. v. Turkey*, թիվ 28496/95, § 51, 7 փետրվարի 2002թ.):

100. Օրենքների համընդհանուր կիրառության ենթակա լինելու սկզբունքի պատճառով իրավական նորմերի ձևակերպումները միշտ չէ, որ ճշգրիտ են: Իրավական նորմերով կարգավորման ընդունված մեթոդներից մեկն ընդհանուր դասակարգումները և ոչ սպառնիչ ցանկերն են: Այսինքն, բազմաթիվ օրենքներով անխուսափելիորեն տրված են այնպիսի ձևակերպումներ, որոնք այս կամ այն չափով անորոշ են, և դրանց մեկնաբանությունը և կիրառումը կախված են պրակտիկայից: (տե՛ս վերևում մեջբերված *Cantoni*, § 31 և վերևում մեջբերված *Kokkinakis*, § 40): Արդյունքում, որքան հստակ էլ ձևակերպված լինի իրավական, այդ թվում՝ քրեաիրավական նորմը, ցանկացած իրավական համակարգում գոյություն ունի դատական մեկնաբանության անխուսափելի տարր: Միշտ էլ կասկածելի կետերը մեկնաբանելու և փոփոխվող հանգամանքներին հարմարեցնելու կարիք է լինելու: Մյուս կողմից, թեպետ որոշակիությունը շատ ցանկալի է, այն իր հերթին կարող է հանգեցնել ավելորդ խստության, իսկ օրենքը պետք է հետ չմնա փոփոխվող հանգամանքներից:

101. Դատարաններին վերապահված գործով քննություն իրականացնելու դերը մեկնաբանության կարիք ունեցող՝ դեռևս չփարատված կասկածները հստակորեն փարատելն է (տե՛ս վերևում մեջբերված *Kafkaris*, § 141): Ավելին, Կոնվենցիայի անդամ պետություններին բնորոշ իրավական սովորույթի կայուն բաղադրիչ է, որ նախադեպային իրավունքը, որպես իրավունքի աղբյուրներից մեկը, անխուսափելիորեն նպաստում է քրեական իրավունքի հետզհետե զարգացմանը (տե՛ս *Kruslin v. France*, 24 ապրիլի 1990 թ., § 29, Շարք Ա թիվ 176-A): Կոնվենցիայի 7-րդ հոդվածը չի կարող մեկնաբանվել այնպես, որ դրանով արգելվի քրեական պատասխանատվությանն առնչվող իրավական նորմերի հետզհետե զարգացումը գործից գործ դրանց տրված դատական մեկնաբանության միջոցով՝ պայմանով, որ դրա արդյունք հանդիսացող զարգացումը հանցանքի էությանը համահունչ և ողջամտորեն կանխատեսելի լինի (տե՛ս *Streletz, Kessler and Krenz v. Germany* [ՄԳ], թիվ 34044/96, 35532/97 և 44801/98, § 50, ՄԻԵԴ 2001-II):

102. Կանխատեսելիությունը զգալիորեն կախված է համապատասխան օրենքի բովանդակությունից, դրա կարգավորման առարկա հանդիսացող ոլորտից և դրա հասցեատերերի թվից ու կարգավիճակից: Նույնիսկ այն դեպքում, երբ համապատասխան անձը պետք է դիմի պատշաճ իրավաբանական խորհրդատվության, կոնկրետ արարքի հավանական հետևանքները տվյալ հանգամանքներում ողջամիտ համարվող աստիճանի գնահատելու համար, օրենքը միևնույն է կարող է բավարարել «կանխատեսելիության» պահանջը (տե՛ս վերևում մեջբերված *Achour*, § 54):

103. 1978 թվականին Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովն արտահայտել է այն կարծիքը, որ ի տարբերություն «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» Միավորված ազգերի կազմակերպության դաշնագրի 15-րդ հոդվածի 1-ին մասի (*in fine*),

Կոնվենցիայի 7-րդ հոդվածը չէր երաշխավորում հանցանքից հետո ընդունված օրենքով սահմանված ավելի մեղմ պատժից օգտվելու իրավունք (տե՛ս *X v. Germany*, թիվ 7900/77, Հանձնաժողովի՝ 1978 թվականի մարտի 6-ի որոշումը, *Որոշումներ և Չեկոյցներ* (ՈՉ) 13, էջ 70-72): Ըստ այդմ, այն ակնհայտ անհիմն է ճանաչել մի դիմումատուի բողոքը, որը պնդել է, որ այն հանցանքները, որոնց համար իրեն մեղադրանք էր առաջադրվել, դրանց կատարումից հետո ապաքրեականացվել էին: Դատարանը, որը կրկնել է, որ 7-րդ հոդվածով հանցագործի համար ավելի մեղմ քրեական օրենքի կիրառման իրավունք չի նախատեսում, վերահաստատել է այդ որոշումը (տե՛ս *Le Petit v. the United Kingdom* (dec.), թիվ 35574/97, 5 դեկտեմբերի 2000թ. և *Zaprianov v. Bulgaria* (dec.), թիվ 41171/98, 6 մարտի 2003թ.):

104. Անկախ այն հանգամանքից, որ Դատարանն իր նախկին վճիռներին հավատարիմ մնալու ձևական պարտականություն չի կրում, իրավական որոշակիության, կանխատեսելիության և օրենքի առջև բոլորի հավասարության շահերից ելնելով, այն չպետք է, առանց հարգելի պատճառի, շեղվի նախկին գործերով ամրագրված նախադեպերից (տե՛ս, օրինակ՝ *Chapman v. the United Kingdom* [ՄՊ], թիվ 27238/95, § 70, ՄԻԵԴ 2001-I): Քանի որ Կոնվենցիան նախաառաջ մարդու իրավունքների պաշտպանության համակարգ է, Դատարանը, այսպես թե այնպես, պետք է հաշվի առնի պատասխանող պետությունում և առհասարակ պայմանավորվող պետություններում փոփոխվող հանգամանքները և արձագանքի, օրինակ՝ այն չափանիշների շուրջ ձևավորվող ցանկացած փոխհամաձայնության, որոնց պետք է հասնել (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Cossey v. the United Kingdom*, 27 սեպտեմբերի 1990թ., § 35, Շարք Ա թիվ 184 և *Stafford v. the United Kingdom* [ՄՊ], թիվ 46295/99, §§ 67-68, ՄԻԵԴ-2002-IV): Չափազանց կարևոր է, որ Կոնվենցիան մեկնաբանվի և կիրառվի այնպես, որ դրանով սահմանված իրավունքները գործնական և արդյունավետ դառնան, այլ ոչ թե՝ տեսական և պատրանքային: Դատարանի կողմից դինամիկ և էվոլյուցիոն մոտեցման պահպանմանը հետևողական չլինելը, կհանգեցնի այն վտանգին, որ այն խոչընդոտ կհանդիսանա փոփոխությունների կամ բարեփոխումների համար (տե՛ս վերևում մեջբերված *Stafford*, § 68 և *Christine Goodwin v. the United Kingdom* [ՄՊ], թիվ 28957/95, § 74, ՄԻԵԴ 2002-VI):

105. Դատարանը կարծում է, որ Հանձնաժողովի կողմից *X v. Germany* գործով կայացված որոշումից հետո զգալի ժամանակ է անցել, և այդ ընթացքում կարևոր միջազգային զարգացումներ են գրանցվել: Մասնավորապես, բացի «Մարդու իրավունքների մասին» ամերիկյան կոնվենցիայի օրինական ուժի մեջ մտնելուց, որի 9-րդ հոդվածով երաշխավորվում է համապատասխան հանցագործության կատարումից հետո ընդունված՝ ավելի մեղմ պատիժ սահմանող օրենքի հետադարձ ուժը (տե՛ս վերևում՝ 36-րդ պարբերություն), հարկ է հիշատակել «Հիմնարար իրավունքների մասին» Եվրոպական միության խարտիայի հռչակման հանգամանքը: Խարտիայի 49-րդ հոդվածի 1-ին մասի ձևակերպումը տարբերվում է, և սա կարող է միայն միտումնավոր լինել (տե՛ս, *mutatis*

mutandis, վերևում մեջբերված *Christine Goodwin*, § 100 (*in fine*)), Կոնվենցիայի 7-րդ հոդվածի ձևակերպումից, քանի որ դրանով սահմանվում է. «Եթե հանցագործության կատարումից հետո օրենքով ավելի մեղմ պատիժ է սահմանվում, այդ պատիժն է ենթակա կիրառման» (տե՛ս վերևում՝ 37-րդ պարբերություն): *Berlusconi and Others* գործով, Եվրոպական համայնքների Արդարադատության դատարանը, որի որոշումը հաստատվել է նաև Փրանսիայի վճռաբեկ դատարանի կողմից (տե՛ս վերևում՝ 39-րդ պարբերություն), որոշել է, որ ավելի մեղմ պատժի հետադարձ ուժով գործողությունն անդամ պետություններին բնորոշ սահմանադրական ավանդույթների մաս էր (տե՛ս վերևում՝ 38-րդ պարբերություն): Ի վերջո, ավելի մեղմ քրեական օրենքի կիրառման ենթակա լինելն ամրագրված էր Միջազգային քրեական դատարանի կանոնադրությամբ և հաստատված ՀՄՔՏ նախադեպային իրավունքով (տե՛ս վերևում՝ 40 և 41-րդ պարբերություններ):

106. Այդ իսկ պատճառով Դատարանը եզրահանգում է, որ *X v. Germany* գործով կայացված որոշումից հետո Եվրոպայում և միջազգային մակարդակում աստիճանաբար ձևավորվել է փոխհամաձայնություն առ այն, որ ավելի մեղմ պատիժ սահմանող օրենքի կիրառումը, նույնիսկ եթե այն ընդունվել է հանցագործության կատարումից հետո, դարձել է քրեական իրավունքի հիմնարար սկզբունք: Հատկանշական է նաև, որ 1930 թվականից ի վեր այդ սկզբունքը ճանաչվել էր պատասխանող պետության օրենսդրությամբ (տե՛ս վերևում՝ 32-րդ պարբերությամբ մեջբերված քրեական օրենսգրքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը):

107. Հարկ է խոստովանել, որ Կոնվենցիայի 7-րդ հոդվածով մեղադրյալին հանցագործության կատարումից հետո ընդունված օրենքի փոփոխություններից օգտվելու հնարավորություն տալու պարտականություն պայմանավորվող պետությունների համար բացահայտ կերպով չի սահմանվում: Կոնվենցիոն այդ ձևակերպմանն առնչվող փաստարկի հիմքով էլ Հանձնաժողովը մերժել է *X v. Germany* գործով դիմումատուի ներկայացրած բողոքը: Սակայն վերոշարադրյալ զարգացումների հաշվառմամբ՝ Դատարանը չի կարող համարել այդ փաստարկը վճռորոշ: Ավելին, այն նկատում է, որ Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին կետը (*in fine*), արգելելով «ավելի ծանր պատժի նշանակումը, քան այն, որը կիրառելի է եղել քրեական հանցագործության կատարման պահին», չի բացառում մեղադրյալին՝ հանցագործության կատարումից հետո ընդունված օրենսդրությամբ սահմանված ավելի մեղմ պատժից օգտվելու հնարավորություն տրամադրելը:

108. Դատարանը համարում է, որ գործը քննող դատարանից՝ դատապարտելի յուրաքանչյուր արարքի նկատմամբ օրենսդրի կողմից համարժեք դիտարկվող պատժի կիրառումն ակնկալելը համահունչ է իրավունքի գերակայության սկզբունքին, որի բաղկացուցիչ մաս է կազմում 7-րդ հոդվածը: Ավելի ծանր պատիժ սահմանելը բացառապես այն հիմնավորմամբ, որ այն նախատեսված էր հանցանքի կատարման պահին, կնշանակեր ժամանակի մեջ քրեական օրենքների իրավահաջորդությունը

կարգավորող կանոնները կիրառելի վնաս ամբաստանյալի: Ավելին, նշվածը կհանգեցնե՝ մեղադրյալի համար բարենպաստ համարվող օրենսդրական ցանկացած փոփոխության անտեսմանը, որը հնարավոր է ընդունված լինել մինչև դատապարտումը, և այն պատիժները կիրառելուն, որոնք պետությունը և վերջինիս կողմից ներկայացվող հասարակությունն արդեն համարում են չափազանց խիստ: Դատարանը նշում է, որ մի քանի քրեական օրենքներից մեղադրյալի համար առավել բարենպաստ դրույթներ նախատեսող օրենքի կիրառման պարտականությունը քրեական օրենքների իրավահաջորդության կանոնների պարզաբանում է, որը համահունչ է 7-րդ հոդվածի մեկ այլ բաղկացուցիչ տարրին, մասնավորապես՝ պատիժների կանխատեսելիությանը:

109. Վերոշարադրյալ վերլուծությունների լույսի ներքո, Դատարանը որդեգրում է այն մոտեցումը, որ անհրաժեշտ է շեղվել *X v. Germany* գործով Հանձնաժողովի կողմից հաստատված նախադեպային իրավունքից և հաստատել, որ Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորվում է ոչ միայն ավելի խիստ քրեական օրենքների հետադարձ ուժ չունենալու սկզբունքը, այլև անուղղակիորեն ապահովվում ավելի մեղմ քրեական օրենքի հետադարձ ուժ ունենալու սկզբունքը: Այդ սկզբունքն արտացոլված է այն կանոնով, համաձայն որի հանցագործության կատարման պահին գործող օրենքի և հետագայում՝ մինչ վերջնական դատական ակտի կայացումն ընդունված օրենքների միջև տարբերությունների դեպքում, դատարանները պետք է կիրառեն այն օրենքը, որով նախատեսված դրույթներն առավել բարենպաստ են ամբաստանյալի համար:

(գ) Արդյոք ՔԴՕ 442-րդ հոդվածը պարունակում է քրեական նյութական իրավունքի դրույթներ

110. Դատարանը վերահաստատում է, որ Կոնվենցիայի 7-րդ հոդվածով սահմանված հետադարձության կանոնները կիրառվում են միայն հանցագործություններ նախատեսող դրույթների և դրանց համար սահմանված պատիժների նկատմամբ. մյուս կողմից, այլ դեպքերում Դատարանը որոշել է, որ բավականին ողջամիտ է, որ ներպետական դատարանները դատավարական օրենքների մասով կիրառեն «դատական ակտի նկատմամբ կիրառելի է դրա կայացման պահին գործող օրենքը» (*tempus regit actum*) սկզբունքը (բողոք ներկայացնելու ժամկետների վերաբերյալ նոր կարգավորումների առնչությամբ տե՛ս *Mione v. Italy* (dec.), թիվ 7856/02, 12 փետրվարի 2004թ. և *Rasnik v. Italy* (dec.), թիվ 45989/06, 10 հուլիսի 2007թ., տե՛ս նաև *Martelli v. Italy* (dec.), թիվ 20402/03, 12 ապրիլի 2007թ.՝ ապացույցների գնահատման նոր կանոններ սահմանող օրենքի կիրարկման մասով, և վերևում մեջբերված *Coëme and Others*, §§ 147-149՝ ընթացիկ վարույթների նկատմամբ վաղեմության ժամկետների նոր կանոններ սահմանող օրենքն անմիջապես կիրառելու մասով): Այդ պատճառով, Դատարանը պետք է որոշի, թե արդյոք այս գործի շրջանակներում բողոքի առարկա հանդիսացող օրենսդրական փոփոխություններին ենթարկված տեքստը, մասնավորապես՝ ՔԴՕ 442-րդ

հոդվածի 2-րդ մասը, պարունակում էր քրեական նյութական իրավունքի նորմեր և, մասնավորապես, կիրառման ենթակա պատժի ժամկետի վրա ազդեցություն ունեցող դրույթներ:

111. Դատարանը նշում է, որ 442-րդ հոդվածը քրեական դատավարության օրենսգրքի մաս է, որով սահմանված դրույթներով, որպես կանոն, կարգավորվում է հանցագործի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու և դատաքննություն իրականացնելու գործընթացը: Այդուհանդերձ, ներպետական իրավունքում քննարկման առարկա հանդիսացող օրենսդրության դասակարգումը չի կարող վճռորոշ լինել: Չնայած, որ ՔԴՕ 438-րդ և 441-443-րդ հոդվածներով նկարագրվում են պարզեցված վարույթի շրջանակը և ընթացակարգային փուլերը, 442-րդ հոդվածի 2-րդ մասն ամբողջովին վերաբերում է պարզեցված վարույթի կարգով դատաքննության իրականացման դեպքում նշանակման ենթակա պատժի ժամկետին: Մասնավորապես, դիմումատուի կողմից հանցագործությունների կատարման պահին 442-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում էր, որ դատապարտման դեպքում դատարանի կողմից նշանակված պատժի ժամկետը ենթակա էր կրճատման՝ մեկ երրորդի չափով: 1999 թվականի թիվ 479 օրենքով, որն օրինական ուժի մեջ էր մտել մինչ դիմումատուի գործով նախնական դատախազությունները, սահմանվում էր, որ ցմահ ազատազրկումը ենթակա էր փոխարինման երեսուն տարի ժամկետով ազատազրկմամբ (տե՛ս վերևում՝ 29-րդ պարբերություն):

112. Կասկած չկա, որ ՔԴՕ 442-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատիժները հանցագործության համար դատապարտվելու դեպքում նշանակման ենթակա պատիժներ էին (տե՛ս վերևում մեջբերված *Welch*, § 28), որ դրանք ներպետական օրենսդրությամբ որակված էին որպես «քրեական» և որ դրանցով հետապնդվում էր թե՛ կանխարգելիչ, թե՛ պատժիչ նպատակ: Ավելին, դրանք իրենցից ներկայացնում էին ամբաստանյալին մեղսագրվող արարքների համար նշանակվող «պատիժ», այլ ոչ թե պատժի «կատարման» կամ «հարկադիր կատարման» միջոցառումներ (տե՛ս վերևում մեջբերված *Kafkaris*, § 142):

113. Վերոշարադրյալի լույսի ներքո Դատարանը կարծում է, որ ՔԴՕ 442-րդ հոդվածի 2-րդ մասը քրեական նյութական իրավունքի դրույթ է, որը վերաբերում է պարզեցված վարույթի կարգով իրականացված դատաքննության արդյունքում դատապարտվելու դեպքում նշանակման ենթակա պատժի ժամկետին: Հետևաբար, այն գտնվում է Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին կետի վերջին նախադասության կարգավորման տիրույթում:

(դ) Արդյոք դիմումատուին ավելի մեղմ քրեական օգտվելու հնարավորություն տրվել էր

114. Դիմումատուն չի փնարկել, որ այն ժամանակ, երբ նա կատարել էր հանցագործությունները (1999 թվականի սեպտեմբերի 2-ին), նրան մեղսագրվող արարքները պատժվում էին ցմահ ազատազրկմամբ՝ զուգակցված ցերեկային ժամերին մեկուսացմամբ, և որ Սահմանադրական

դատարանի 1991 թվականի թիվ 176 որոշման հաշվառմամբ (տե՛ս վերևում՝ 28-րդ պարբերություն), նշվածը խոչընդոտ էր պարզեցված վարույթ կիրառելու համար:

115. Սակայն այդ խոչընդոտը վերացվել է չորս ամիս անց՝ 2000 թվականի հունվարի 2-ին՝ 1999 թվականի թիվ 479 օրենքի ուժի մեջ մտնելով, երբ դիմումատուի քրեական գործով վարույթը դեռ գտնվել է նախաքննության փուլում: Ինչպես արդեն նշվել է, թիվ 479 օրենքի 30-րդ հոդվածով ԶԴՕ 442-րդ հոդվածում կատարվել են փոփոխություններ, որոնց համաձայն պարզեցված վարույթի կարգով իրականացված դատաքննության արդյունքում դատապարտվելու դեպքում «ցմահ ազատազրկումը փոխարինվում [էր] երեսուն տարի ժամկետով ազատազրկմամբ» (տե՛ս վերևում՝ 29-րդ պարբերություն): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նախաքննության հարցերով մասնագիտացած դատավորը, հիմք ընդունելով դիմումատուի միջնորդությունը, արդյունքում համաձայնել է կիրառել պարզեցված վարույթ (տե՛ս վերևում՝ 11-րդ և 12-րդ պարբերություններ)՝ Դատարանը կարծում է, որ 1999 թվականի թիվ 479 օրենքի 30-րդ հոդվածը հետագայում ընդունված քրեաիրավական նորմ է, որով սահմանվում է ավելի մեղմ պատիժ: Հետևաբար, Կոնվենցիայի 7-րդ հոդվածով, հիմք ընդունելով այս վճռում դրան տրված մեկնաբանությունը (տե՛ս վերևում՝ 109-րդ պարբերություն), պահաջվում էր, որ դիմումատուին դրանից օգտվելու հնարավորություն տրվեր:

116. Ավելին, այդ էլ տեղի էր ունեցել առաջին ատյանի դատարանի վարույթի շրջանակներում: 2000 թվականի նոյեմբերի 24-ին կայացված դատավճռով Հռոմի՝ Նախաքննության հարցերով մասնագիտացած դատավորը դիմումատուին դատապարտել է երեսուն տարի ժամկետով ազատազրկման՝ նրան ԶԴՕ 442-րդ հոդվածի 2-րդ մասով՝ 1999 թվականի թիվ 479 օրենքով կատարված փոփոխությունների հաշվառմամբ, սահմանված պատժի մեղմացման հնարավորություն տրամադրելով (տե՛ս վերևում՝ 13-րդ պարբերություն):

117. Սակայն հոգուտ մեղադրյալի հանցագործությունների կատարումից հետո ընդունված՝ ավելի մեղմ պատիժ սահմանող դրույթի կիրառումը մերժվել էր Հռոմի վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների կողմից: Այդ դատարանները որդեգրել էին այն մոտեցումը, որ անհրաժեշտ էր կիրառել 2000 թվականի թիվ 341 օրենսդրական դեկրետը, որով հստակեցվում էր, որ հանցագործությունների համակցության դեպքում, եթե հանցագործը, ինչպես դիմումատուն, ենթակա էր ցմահ ազատազրկման՝ զուգակցված ցերեկային ժամերին մեկուսացմամբ, այդ պատիժը պետք է փոխարինվեր ոչ թե երեսուն տարի ժամկետով ազատազրկմամբ, այլ՝ ցմահ ազատազրկմամբ՝ առանց մեկուսացման (տե՛ս վերևում՝ 19-21-րդ, 24-րդ, 30-րդ և 31-րդ պարբերություններ):

118. Դատարանը չի կարող ընդունել Կառավարության փաստարկն առ այն, որ թիվ 341 օրենսդրական դեկրետը ոչ թե պարզեցված վարույթի դեպքում կիրառման ենթակա պատժի առնչությամբ նոր կանոններ նախատեսող դրույթ էր, այլ մի օրենք, որով մեկնաբանություն էր տրվում

նախկինում ընդունված օրենսդրությանը (տե՛ս վերևում 91-րդ պարբերություն): Այդ առնչությամբ այն նկատում է, որ 1999 թվականի թիվ 479 օրենքով կատարված փոփոխությունների արդյունքում ՔԴՕ 442-րդ հոդվածի 2-րդ մասը որևէ հատուկ երկիմաստություն չէր պարունակում. դրանով հատակ սահմանվում էր, որ ցմահ ազատազրկումը ենթակա էր փոխարինման երեսուն տարի ժամկետով ազատազրկմամբ, և տարբերություն չէր դրվում ցերեկային ժամերին մեկուսացմամբ զուգակցված կամ առանց դրա ցմահ ազատազրկման միջև: Ավելին, Կառավարությունը չի ներկայացրել դատական որևէ որոշման օրինակ, որի հիմքում ենթադրաբար դրված լինեին 442-րդ հոդվածին տրված հակասական մեկնաբանությունները:

119. Հետևաբար, դիմումատուի նկատմամբ նշանակվել է ավելի ծանր պատիժ, քան այն, որը նախատեսված էր այն օրենքով, որը հանցագործության կատարումից մինչև վերջնական դատավճռի կայացումն ընկած ժամանակահատվածում գործող օրենքներից առավել բարենպաստն էր նրա համար:

(ե) Եզրահանգում

120. Վերոշարադրյալի լույսի ներքո Դատարանը գտնում է, որ պատասխանող պետությունը դիմումատուին՝ հանցագործության կատարումից հետո ուժի մեջ մտած ավելի մեղմ պատիժ սահմանող դրույթից օգտվելու հնարավորության տրամադրման իր պարտականությունը չի կատարել:

121. Հետևաբար, այս դեպքում տեղի է ունեցել Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ԲԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱՄՏՈՒՄԸ

122. Դատարանը վերահաստատում է իր եզրահանգումն առ այն, որ այն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի լույսի ներքո ընդունելի հայտարարված բողոքի հիմքում դրված փաստերը քննելու իրավագործություն ևս ունի (տե՛ս վերևում՝ 57-րդ պարբերություն):

123. Դրույթի վերաբերելի հատվածներով սահմանվում է.

«Յուրաքանչյուր ոք ... նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի ... դատարանի կողմից ... արդարացի ... դատաքննության իրավունք ...»

124. Կառավարությունը մերժել է այս բողոքը:

Ա. Կառավարության առարկությունն իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու մասին

125. Կառավարությունը նկատել է, որ դիմումատուն չէր օգտվել պարզեցված վարույթի կիրառման վերաբերյալ իր ներկայացրած

միջնորդությունից հրաժարվելու հնարավորությունից, որը նախատեսված էր 2000 թվականի թիվ 341 օրենսդրական դեկրետի 8-րդ հոդվածի 2-րդ մասով (տե՛ս վերևում՝ 31-րդ պարբերություն): 8-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթների համաձայն, դիմումատուն՝ մինչև 2001 թվականի փետրվարի 21-ը, իր միջնորդությունից հրաժարվելու իրավունքից օգտվելու հնարավորություն ուներ և, եթե նա այդ կերպ վարված լիներ, կկարողանար օգտվել ընդհանուր վարույթի կարգով իրականացվող և Կոնվենցիայի 6-րդ հոդվածով ամրագրված բոլոր երաշխիքներով ուղեկցվող դատաքննությունից:

126. Դատարանը կարծում է, որ Կառավարության առարկությամբ բարձրացվում են այնպիսի հարցեր, որոնք սերտորեն կապված են դիմումատուի՝ 6-րդ հոդվածի լույսի ներքո ներկայացրած բողոքով բարձրացված խնդիրների հետ: Այդ իսկ պատճառով այն որոշում է իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու վերաբերյալ առարկությունը միացնել գործի ըստ էության քննությանը (տե՛ս, *mutatis mutandis* և, ի թիվս այլ վճիռների, *Isaak v. Turkey*, թիվ 44587/98, § 78, 24 հունիսի 2008թ.):

Բ. Բողոքի հանգամանքները

1. Կողմերի փաստարկները

(ա) Դիմումատուն

127. Դիմումատուն պնդել է, որ Կոնվենցիայի 7-րդ հոդվածի խախտմանը հանգեցրած հանգամանքները նաև խախտել էին արդար դատաքննության սկզբունքները: 2000 թվականի փետրվարին նա նախընտրել էր պարզեցված վարույթը և այդպիսով հրաժարվել դատավարական մի շարք երաշխիքներից, քանի որ գիտեր, որ այդ ժամանակահատվածում գործող քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ դատապարտման դեպքում, նա կպատժվեր երեսուն տարի ժամկետով, այլ ոչ թե՝ ցմահ ազատազրկման: Սակայն ՔԴՕ-ում կատարվել էին անբարենպաստ փոփոխություններ, և իր հրաժարման դիմաց նրա պատիժը չէր մեղմացվել (միակ առավելությունն այն էր, որ նա խուսափել էր ցերեկային ժամերին մեկուսացումից): Այդուհանդերձ, պարզեցված վարույթի կիրառմամբ ենթադրվում էր ամբաստանյալի և պետության միջև «հանրային իրավունքի պայմանգրի» առկայություն. կնքվելուց հետո այդ «պայմանագիրը» չէր կարող միակողմանի լուծվել կամ փոփոխվել:

128. Դիմումատուն նկատել է, որ թիվ 341 օրենսդրական դեկրետի օրինական ուժի մեջ մտնելու և օրենքի փոխակերպման պահին նա գտնվել է բանտում: Այդ պատճառով նա անտեղյակ է եղել պարզեցված վարույթի կիրառման վերաբերյալ իր ներկայացրած միջնորդությունից հրաժարվելու հնարավորության մասին, որն առնչվել է ամբաստանյալի անձնական

իրավունքի իրացմանը: Այդ հնարավորությունը չի հիշատակվել դատախազության ներկայացրած վճարելի բողոքում: Քանի որ նա ծանոթ չի եղել դատավարական նրբություններին, իր դատավարական որոշումները վերանայելու իրական հնարավորություն չի ունեցել: *Hermi v. Italy* ([ՄԴ], թիվ 18114/02, § 92, ՄԻԵԴ 2006-...) գործով վճռում արված պնդումը, որ պետությունից չէր կարող պահանջվել վարույթի յուրաքանչյուր փուլում մանրամասն պարզաբանել ամբաստանյալի իրավունքները և արտոնությունները, վերաբերելի չէր քննարկվող գործում, որն առնչվում էր ավելի ծանր պատժի հետադարձ ուժով կիրառմանը:

(բ) Կառավարությունը

129. Կառավարությունն ընդունել է, որ դիմումատուի կողմից պարզեցված վարույթի կիրառման միջնորդություն ներկայացնելու ժամանակ (2000 թվականի փետրվարի 18-ին), ՔԴՕ 442-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում էր, որ եթե նշանակման ենթակա պատիժը ցմահ ազատազրկումն էր, դատավորը պետք է պատժի ժամկետը կրճատեր մինչև երեսուն տարի: Ավելին, հնարավոր է, որ երբ դիմումատուն առաջին ատյանի դատարանի կայացրած դատավճռով մեղավոր է ճանաչվել (2000 թվականի նոյեմբերի 24-ին), նա տեղյակ չի եղել 2000 թվականի թիվ 341 օրենսդրական դեկրետի գոյության մասին, որն օրինական ուժի մեջ էր մտել նույն օրը: Մակայն, խորհրդարանը կանխատեսել էր այդ հնարավորությունը և ամբաստանյալներին պարզեցված վարույթի կիրառման միջնորդությունից հրաժարվելու և փոխարենն ընդհանուր վարույթի կարգով դատաքննությունն ընտրելու իրավունք շնորհել (տե՛ս վերևում՝ 31-րդ պարբերությամբ մեջբերված 2000 թվականի թիվ 341 օրենսդրական դեկրետի 8-րդ հոդվածը):

130. Քննարկվող իրավունքից անհրաժեշտ էր օգտվել երեսուն օրվա ընթացքում այն պահից, երբ խորհրդարանի՝ թիվ 341 օրենսդրական դեկրետն օրենքի փոխակերպող որոշումն օրինական ուժի մեջ էր մտել (այսինքն՝ մինչև 2001 թվականի փետրվարի 21-ը) կամ դատախազության ներկայացրած վճարելի բողոքի մասին ծանուցվելու պահից: Հետևաբար, դիմումատուն ունեցել էր երեք ամիս ժամանակ իր գործով պարզեցված վարույթի կարգով դատաքննությանը համաձայնելու որոշումը վերանայելու համար, սակայն նախընտրել էր չօգտվել այդ հնարավորությունից: Եթե նա նման որոշում կայացներ, վարույթը կվերադարձվեր նախնական դատախազության փուլ, և դատաքննությունը կընթանար ընդհանուր կանոնների համաձայն:

131. Քանի որ թիվ 341 օրենսդրական դեկրետը հրապարակվել էր Պաշտոնական տեղեկագրում, պետք է համարել, որ այն բոլորին հայտնի էր: Ինչպես Մեծ պալատն արձանագրել էր *Hermi-ի* (մեջբերված է վերևում) գործով, դիմումատուի փաստաբանն իր վստահորդին նշվածի վերաբերյալ տեղեկացնելու օրենքով սահմանված և մասնագիտական պարտականություն էր կրում: Ավելին, դատախազության ներկայացրած

վճարել բողոքում, որի պատճեններն ուղարկվել էին թե՛ դիմումատուին, թե՛ նրա փաստաբանին, նշված էր նոր օրենսդրությունը:

2. Դատարանի գնահատականը

132. Դատարանը, նախևառաջ, նկատում է, որ քաղաքացիական վեճերի համատեքստում, այն բազմիցս արձանագրել է, որ թեպետ, որպես կանոն, օրենսդիրը գրկված չէ հետադարձ ուժ ունեցող նոր դրույթներով գործող օրենքներից բխող իրավունքների կարգավորման հարցում, իրավունքի գերակայության սկզբունքով և 6-րդ հոդվածով ամրագրված արդար դատաքննության հասկացությամբ օրենսդիրն արգելվում է, առանց հանրային շահ հետապնդող համոզիչ պատճառների, միջամտել արդարադատության իրականացմանը, որի նպատակն է ազդել վեճի դատավարական ելքի վրա (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Stran Greek Refineries and Stratis Andreadis v. Greece*, 9 դեկտեմբերի 1994թ., § 49, Շաքք Ա թիվ 301-B, *National & Provincial Building Society, Leeds Permanent Building Society and Yorkshire Building Society v. the United Kingdom*, 23 հոկտեմբերի 1997թ., § 112, *Zielinski and Pradal and Gonzalez and Others v. France* [ՄՊ], թիվ 24846/94 և 34165/96-ից մինչև 34173/96, § 57, ՄԻԵԴ 1999-VII և *Scordino v. Italy (no. 1)* [ՄՊ], թիվ 36813/97, § 126, ՄԻԵԴ 2006-...): Դատարանը կարծում է, որ այդ սկզբունքները, որոնք իրավական որոշակիության և գործով կողմերի իրավաչափ վստահության գաղափարների պաշտպանության բաղկացուցիչ մաս են (տե՛ս *Unedic v. France*, թիվ 20153/04, § 74, 18 դեկտեմբերի 2008թ.), *mutatis mutandis*, կիրառելի են քրական վարույթի նկատմամբ:

133. Քննարկվող գործով դիմումատուն բողոք է ներկայացրել առ այն, որ չնայած նա նախընտրել էր պարզեցված դատաքննությունը, այն է՝ պարզեցված վարույթը, նա գրկվել էր այդ որոշումից բխող ամենակարևոր առավելությունից, մասնավորապես՝ ցմահ ազատազրկումը երեսուն տարի ժամկետով ազատազրկմամբ փոխարինելուց, որը սահմանված էր իր կողմից որոշման կայացման պահին գործող օրենքով:

134. Դատարանն արդեն առիթ ունեցել է քննելու Իտալիայի քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված պարզեցված վարույթի առանձնահատկությունները: Այն նկատել է, որ այդ ընթացակարգով ամբաստանյալին տրամադրվում են անվիճելի առավելություններ. դատապարտվելու դեպքում, նրա պատիժը զգալիորեն մեղմացվում է, և դատախազությունը չի կարող բողոքարկել դատապարտման այն որոշումը, որը չի շեղվում հանցագործությանը տրված իրավաբանական որակումից (տե՛ս վերևում մեջբերված *Hermi*, § 78 և *Hany v. Italy (dec.)*, թիվ 17543/05, 6 նոյեմբերի 2007թ.): Սակայն, պարզեցված ընթացակարգը հանգեցնում է նաև ներպետական օրենսդրությամբ տրամադրվող դատավարական երաշխիքների, մասնավորապես՝ դռնբաց դատակ նիստի ու ապացույցներ ներկայացնելու և վկաներ հրավիրելու հնարավորության նվազեցմանը (տե՛ս *Kwiatkowska v. Italy (dec.)*, թիվ 52868/99, 30 նոյեմբերի 2000թ.): Պարզեցված վարույթի կարգով իրականացվող դատաքննության

շրջանակում նոր ապացույցներ ներկայացնելու հնարավորությունը, որպես կանոն, բացառվում է, քանի որ դատարանի որոշումը, որոշ բացառություններով, պետք է կայացվի Գլխավոր դատախազությունում պահպանվող քրեական գործում առկա փաստաթղթերի հիմքով (տե՛ս վերևում մեջբերված *Hermi*, § 87, տե՛ս նաև վերևում՝ 27-րդ պարբերություն):

135. Վերոշարադրյալ երաշխիքները Կոնվենցիայի 6-րդ հոդվածով ամրագրված արդար դատաքննության իրավունքի հիմնարար ասպեկտներ են: Կոնվենցիայի 6-րդ հոդվածի ո՛չ տառը, ո՛չ էլ ոգին անհատի համար խոչընդոտ չեն սեփական հոժար կամքով ուղղակիորեն կամ լռելայն դրանցից հրաժարվելու համար: Այնուամենայնիվ, որպեսզի նման հրաժարումը Կոնվենցիայի իմաստով արդյունավետ լինի, այն պետք է աներկբայորեն հաստատված լինի և ուղեկցվի դրա կարևորությանը համարժեք նվազագույն երաշխիքներով (տե՛ս *Poitrimol v. France*, 23 նոյեմբերի 1993թ., § 31, Շարք A թիվ 277-A, և վերևում մեջբերված *Hermi*, § 73): Դրանից զատ, այն պետք է չհակասի որևէ կարևոր հանրային շահի (տե՛ս *Håkansson and Stureson v. Sweden*, 21 փետրվարի 1990թ., § 66, Շարք Ա թիվ 171-A և վերևում մեջբերված *Sejdovic*, § 86):

136. Դատարանը կարծում է, որ պարզեցված վարույթ կիրառելու միջնորդություն ներկայացնելով՝ դիմումատուն, որին աջակցում էր նրա կողմից ընտրված փաստաբանը և որը, հետևաբար, կարող էր գնահատել իր ներկայացրած միջնորդության հնարավոր հետևանքները, աներկբայորեն հրաժարվել էր հրապարակային դատալսումների, վկաներ հրավիրելու, նոր ապացույցներ ներկայացնելու և մեղադրանքի կողմի վկաներին հարցեր ուղղելու իր իրավունքներից: Ոչ էլ կարելի է ենթադրել, որ գործով բարձրացվում էին հանրային շահին առնչվող այնպիսի խնդիրներ, որոնք խոչընդոտում էին նման հրաժարումը (տե՛ս, *mutatis mutandis*, վերևում մեջբերված *Kwiatkowska*-ի գործով որոշումը):

137. Սակայն ինչպես արդեն նշվել է, հրաժարումը կատարվել էր որոշ առավելությունների դիմաց, որոնց թվում էր ցմահ ազատազրկման նշանակումից հրաժարվելը, ինչը՝ 1999 թվականի թիվ 479 օրենքով կատարված փոփոխությունների հաշվառմամբ, հստակորեն բխում էր ԶԴՕ 442-րդ հոդվածի բովանդակությունից, որի համաձայն՝ պարզեցված վարույթի շրջանակներում դատապարտվելու դեպքում նշանակման ենթակա պատժի ժամկետը պետք է կրճատվեր մեկ երրորդով, իսկ ցմահ ազատազրկումը՝ փոխարինվեր երեսուն տարի ժամկետով ազատազրկմամբ: Հիմք ընդունելով պարզեցված վարույթի կիրառման միջնորդություն ներկայացնելու պահին գործող իրավական այդ հիմքերը՝ դիմումատուն կարող էր ողջամտորեն ակնկալել, որ, նրա կատարած դատավարական ընտրության շնորհիվ, առավելագույն պատիժը, որին նա ենթակա էր, երեսուն տարի ժամկետով ազատազրկումը չգերազանցող պատիժն էր:

138. Սակայն դիմումատուի այդ ողջամիտ ակնկալիքը չարդարացավ 2000 թվականի թիվ 341 օրենսդրական դեկրետի հետևանքով, որով

սահմանվում էր, որ եթե դատավորն այն կարծիքին էր, որ համարժեք պատիժը ցերեկային ժամերին մեկուսացմամբ զուգակցված ցմահ ազատազրկումն էր, նշանակման ենթակա պատիժը պետք է լիներ ցմահ ազատազրկումն առանց մեկուսացման: Թիվ 341 օրենսդրական դեկրետի օրինական ուժի մեջ մտնելու օրվանից (24-ը նոյեմբերի 2000 թվական) ակնհայտ էր, որ այդ պատիժը կարող էր նշանակվել նույնիսկ պարզեցված վարույթի կարգով իրականացված դատաքննություններով ամբաստանյալների նկատմամբ: Այդուհանդերձ, պատիժ սահմանող դրույթների փոփոխությունը կիրառվել է ոչ միայն պարզեցված վարույթի կարգով դատաքննության իրականացման նոր միջնորդություններ ներկայացնող ամբաստանյալների, այլև այն անձանց նկատմամբ, որոնք, ինչպես դիմումատու, արդեն ներկայացրել էին նման միջնորդություն, և առաջին ատյանի դատարանում նրանց վերաբերյալ գործերով դատաքննությունն իրականացվել էր նախքան թիվ 341 օրենսդրական դեկրետի Պաշտոնական տեղեկագրում հրապարակվելը:

139. Դատարանը կարծում է, որ այն անձը, որին մեղադրանք է առաջադրվել, պետք է հնարավորություն ունենա ակնկալելու, որ պետությունը կգործի բարեխղճորեն և պատշաճ կերպով հաշվի կառնի պաշտպանության կողմի դատավարական ընտրությունները, որոնք կատարվել են՝ օգտագործելով օրենքով տրամադրվող հնարավորությունները: Արդար դատաքննության հասկացության անբակտելի մաս կազմող որոշ իրավունքներից հրաժարվելու հետ կապված առավելությունները պետության կողմից միակողմանիորեն նվազեցնելու հնարավորություն ունենալը հակասում է իրավական որոշակիության սկզբունքին և դատական վարույթին ներգրավված անձանց իրավաչափ վստահության պաշտպանությանը: Քանի որ նման հրաժարման հիմքում ընկած են հիշատակված առավելությունները, պարզեցված վարույթի կիրառմանը ներպետական իրավասու մարմինների համաձայնած լինելու դեպքում, չի կարող արդար համարվել, եթե պետության և ամբաստանյալի միջև ձեռք բերված համաձայնության կենսական բաղադրիչը փոփոխվի ի վնաս ամբաստանյալի՝ առանց նրա համաձայնության: Այդ առնչությամբ Դատարանը նշում է, որ թեպետ Կոնվենցիայով պայմանավորվող պետությունների վրա պարզեցված վարույթներ նախատեսելու պարտավորություն չի դրվում (տե՛ս վերևում մեջբերված *Hany*-ի գործով որոշումը), այդպիսի վարույթների առկայության և կիրառման դեպքում, արդար դատաքննության սկզբունքներով պահանջվում է, որ ամբաստանյալները կամայականորեն չզրկվեն դրանց հետ կապված երաշխիքներից:

140. Քննարկվող գործում առաջին ատյանի դատարանում վարույթն ավարտվելուց հետո թիվ 341 օրենսդրական դեկրետով նախատեսված դրույթների կիրառումը դիմումատուին զրկել է օրենքով սահմանված և նրա կողմից պարզեցված վարույթի կարգով դատաքննությունն ընտրելու որոշմանը նպաստած կարևոր առավելությունից: Նշվածն անհամատեղելի է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով ամրագրված սկզբունքների հետ:

141. Մնում է որոշել, թե արդյոք թիվ 341 օրենսդրական դեկրետի 8-րդ հոդվածով սահմանված պարզեցված վարույթի կիրառման միջնորդությունից հրաժարվելու դիմումատուի իրավունքը կարող էր հատուցում տրամադրել նրա կրած վնասի համար:

142. Դատարանը, նախևառաջ, նկատում է, որ չի կարող ընդունել դիմումատուի այն փաստարկը, որ քանի որ իշխանությունները նրան չէին տեղեկացրել այդ իրավունքի մասին, նա դրանից օգտվելու իրական հնարավորություն չէր ունեցել: Այն վերահաստատում է, որ պետությանը չի կարելի պարտավորեցնել վարույթի յուրաքանչյուր փուլում մանրամասն պարզաբանել ամբաստանյալի իրավունքները և արտոնությունները, և որ մեղադրյալի պաշտպանն է պարտավոր իր վստահորդին տեղեկացնել նրա դեմ նախաձեռնված վարույթի ընթացքի և այն քայլերի մասին, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել նրա իրավունքների պաշտպանությունն ապահովելու համար (տե՛ս վերևում մեջբերված *Hermi*, § 92): Չնայած թիվ 341 օրենսդրական դեկրետի հրապարակման և դատախազության կողմից վճռաբեկ բողոքի ներկայացման պահին դիմումատուն գրկված էր իր ազատությունից, նրան ներկայացնում էին իր ընտրած երկու փաստաբանները, որոնք, ավելին, 2001 թվականի փետրվարի 5-ին բողոքարկել էին առաջին ատյանի դատարանի դատավճիռը (տե՛ս վերևում՝ 16-րդ պարբերություն): Ինչպես Կառավարությունն իրավացիորեն մատնանշել է, այդ փաստաբաններն ստացել էին դատախազության բողոքի պատճենը, որտեղ ակնհայտորեն հիշատակված էր թիվ 341 օրենսդրական դեկրետը: Հետևաբար, նրանք ունեցել էին իրենց վստահորդին դրա վերաբերյալ տեղեկացնելու և նրա հետ դատախազության փաստարկներից հնարավորինս արդյունավետ պաշտպանությունը քննարկելու հնարավորություն: Ավելին, նրանք այդ հարցի ուսումնասիրության համար բավարար ժամանակ են ունեցել (խորհրդարանի՝ թիվ 341 օրենսդրական դեկրետն օրենքի փոխակերպող որոշումն օրինական ուժի մեջ մտնելու կամ դատախազության ներկայացրած վճռաբեկ բողոքի մասին ծանուցվելու օրվանից երեսուն օրվա ընթացքում):

143. Սակայն, անհրաժեշտ է ընդգծել, որ եթե դիմումատուն պարզեցված վարույթի կիրառման իր միջնորդությունից հրաժարված լիներ, արդյունքը կլիներ նրա նկատմամբ նախաձեռնված վարույթի վերաբացումն ընդհանուր վարույթի կարգով, և նրա գործով դատաքննության վերսկսումը նախնական դատալսումների փուլից: Այսպիսով, նա կօգտվեր այն իրավունքներից, որոնցից հրաժարվել էր, նախընտրելով պարզեցված վարույթը, սակայն չէր կարողանա պետությանը հարկադրել հավատարիմ մնալ նախկինում ձեռք բերված համաձայնությանը, ըստ որի դատավարական երաշխիքներից հրաժարվելու առաջարկը պետք է արվեր պատժի մեղմացման դիմաց:

144. Դատարանի կարծիքով ծայրահեղ կլիներ ամբաստանյալից պահանջել հրաժարվել իշխանությունների կողմից ընդունված պարզեցված վարույթի հնարավորությունից, որի արդյունքում նա առաջին ատյանի դատարանում կարողացել էր օգտվել այն առավելություններից, որոնց

հույսն ունեցել էր: Այդ առնչությամբ Դատարանը նկատում է, որ դիմումատուն, ինն ամսից ավել (2000 թվականի փետրվարի 18-ից մինչև նոյեմբերի 24-ը), իրավաչափորեն կարծել էր, որ նրա՝ պարզեցված վարույթի կարգով դատաքննություն իրականացնելու ընտրության շնորհիվ, առավելագույն պատիժը, որին նա ենթակա էր, երեսուն տարի ժամկետով ազատազրկումն էր, և որ այդ իրավաչափ ակնկալիքը չէր արդարացել նրա կառավարման տիրույթից դուրս գտնվող գործոնների հետևանքով, ինչպիսին են՝ ներպետական վարույթի տևողությունը և 2000 թվականի թիվ 341 օրենսդրական դեկրետի ընդունումը:

145. Հետևաբար, իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու վերաբերյալ Կառավարության նախնական առարկությունը (տե՛ս վերևում՝ 125-126-րդ պարբերություններ) չի կարող ընդունվել, և տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում:

IV. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 46-ՐԴ ԵՎ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Կոնվենցիայի 46-րդ հոդվածը

146. Կոնվենցիայի 46-րդ հոդվածով սահմանվում է.

«1. Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են կատարել Դատարանի վերջնական վճիռները ցանկացած գործերի վերաբերյալ, որոնցում նրանք կողմեր են:

2. Դատարանի վերջնական վճիռն ուղարկվում է Նախարարների կոմիտե, որը վերահսկողություն է իրականացնում դրա կատարման նկատմամբ:»:

147. Կոնվենցիայի 46-րդ հոդվածի համաձայն՝ բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են՝ Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ, կատարել Դատարանի վերջնական վճիռները ցանկացած գործերի վերաբերյալ, որոնցում նրանք կողմեր են: Հետևաբար, Դատարանի խախտում արձանագրող վճռով պատասխանող պետության վրա, *inter alia*, դրվում է ոչ միայն 41-րդ հոդվածի հիմքով որպես արդարացի հատուցում սահմանված գումարը համապատասխան անձանց վճարելու, այլև իրականացման ենթակա ընդհանուր և (կամ), ըստ անհրաժեշտության, անհատական միջոցառումները որոշելու իրավական պարտականություն: Քանի որ Դատարանի վճիռները հիմնականում դեկլարատիվ բնույթ են կրում, պատասխանող պետությունը՝ Նախարարների կոմիտեի վերահսկողության ներքո, ազատ է ընտրելու այն միջոցառումները, որոնց միջոցով այն կատարելու է Կոնվենցիայի 46-րդ հոդվածով սահմանված իր իրավական պարտականությունը՝ պայմանով, որ այդ միջոցառումները համատեղելի լինեն Դատարանի վճռում արված եզրահանգումների հետ (տե՛ս *Scozzari and Giunta v. Italy* [ՄԴ], թիվ 39221/98 և 41963/98, § 249, ՄԻԵԴ 2000-VIII, վերևում մեջբերված *Sejdovic*, § 119 և *Aleksanyan v. Russia*, թիվ 46468/06, § 238, 22 դեկտեմբերի 2008թ.):

148. Սակայն, հետապնդելով պատասխանող պետությանը 46-րդ հոդվածով սահմանված պարտականությունների կատարման հարցում աջակցելու նպատակ, Դատարանը, բացառիկ դեպքերում, կփորձի մատնանշել այն միջոցառման տեսակը, որը կարելի է ձեռնարկել արձանագրված իրավիճակին վերջ դնելու համար (տե՛ս օրինակ՝ *Broniowski v. Poland* [ՄԴ], թիվ 31443/96, § 194, ՄԻԵԴ 2004-V): Այլ բացառիկ դեպքերում, երբ արձանագրված խախտման բնույթով պայմանավորված բացակայում է խախտումը վերացնելու հնարավորություն ընձեռող միջոցառումներից ընտրություն կատարելու իրական հնարավորություն, Դատարանը կարող է ընդամենը մեկ այդպիսի միջոցառում նշելու որոշում կայացնել (տե՛ս վերևում մեջբերված *Aleksanyan*, § 239 և *Abbasov v. Azerbaijan*, թիվ 24271/05, § 37, 17 հունվարի 2008թ.):

149. Դատարանը քննարկվող գործում հարկ չի համարում նշել ընդհանուր այն միջոցառումները, որոնք պահանջվում է ձեռնարկել ներպետական մակարդակում կայացված վճռի կատարումն ապահովելու նպատակով:

150. Ինչ վերաբերում է անհատական միջոցառումներին, Դատարանը նկատում է, որ բազմաթիվ գործերում, որոնցում այն արձանագրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում այն պատճառով որ դիմումատուի գործով քննությունը չի իրականացվել անկախ և անկողմնակալ դատարանի կողմից (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Gençel v. Turkey*, թիվ 53431/99, § 27, 23 հոկտեմբերի 2003թ. և *Tahir Duran v. Turkey*, թիվ 40997/98, § 23, 29 հունվարի 2004թ.), կամ քանի որ միջամտություն է տեղի ունեցել դատաքննությանը մասնակցելու իրավունքին (տե՛ս *Somogyi v. Italy*, թիվ 67972/01, § 86, ՄԻԵԴ 2004-IV և *R.R. v. Italy*, թիվ 42191/02, § 76, 9 հունիսի 2005թ.), կամ վկաներին հացադրումներ անելու իրավունքին (տե՛ս *Bracci v.*

Italy, թիվ 36822/02, § 75, 13 հոկտեմբերի 2005թ.), Դատարանը Պալատի կազմով կայացված վճիռներում նշել է, որ, սկզբունքորեն, դիմումատուի համար պաշտպանության ամենաարդյունավետ միջոցը կլինեն գործի առանց ձգձումների վերաբացումը, եթե նա այդպիսի պահանջ ներկայացներ: Մեծ պալատը հաստատել է վերոշարադրյալ գործերով որդեգրված ընդհանուր մոտեցումը (տե՛ս *Öcalan v. Turkey* [ՄԳ], թիվ 46221/99, § 210, ՄԻԵԴ 2005-IV և վերևում մեջբերված *Sejdovic*, §§ 126-127):

151. Այնուամենայնիվ, անհատական միջոցառումների նպատակը պետք է լինի դիմումատուին, որքանով հնարավոր է, այն իրավիճակում դնելը, որում նա կլիներ, եթե կոնվենցիոն պահանջները խախտված չլինեին (տե՛ս *Piersack v. Belgium* (հոդված 50), 26 հոկտեմբերի 1984թ., § 12, Շարք Ա թիվ 85): Դատարանի՝ խախտում արձանագրող վճռով Կոնվենցիայի 46-րդ հոդվածի համաձայն պատասխանող պետության վրա դրվում է արձանագրված խախտումը վերացնելու և դրա հետևանքների համար այնպիսի հատուցում տրամադրելու իրավական պարտականություն, որը հնարավորինս կվերականգնի մինչև խախտումը եղած իրավիճակը (տե՛ս *Mentes and Others v. Turkey* (արդարացի հատուցում), 24 հուլիսի 1998թ., § 24, *Չեկոյցներ* 1998-IV, վերևում մեջբերված *Scozzari and Giunta*, § 249, *Maestri v. Italy* [ՄԳ], թիվ 39748/98, § 47, ՄԻԵԴ 2004-I և *Assanidze v. Georgia* [ՄԳ], թիվ 71503/01, § 198, ՄԻԵԴ 2004-II):

152. Վճռի կատարման եղանակի հարցում պետությունը պահպանում է հայեցողություն՝ պայմանով, որ այն կատարի Կոնվենցիայով սահմանված իր հիմնական պարտականությունը, այն է՝ երաշխավորված իրավունքների և ազատությունների ապահովումը (տե՛ս վերևում մեջբերված *Assanidze*, § 202): Միևնույն ժամանակ, վավերացնելով Կոնվենցիան՝ պայմանավորվող պետությունները պարտավորվում են ապահովել իրենց ներպետական օրենսդրության համապատասխանությունը դրան. այսպիսով՝ պատասխանող պետությունն է պարտավոր վերացնել իր ներպետական իրավական համակարգում գոյություն ունեցող ցանկացած խոչընդոտ, որը կարող է խանգարել դիմումատուի իրավիճակն ամբողջովին շտկելուն (տե՛ս վերևում մեջբերված *Maestri*, § 47 և վերևում մեջբերված *Assanidze*, § 198):

153. Քննարկվող գործով Դատարանն արձանագրել է, որ 2000 թվականի թիվ 341 օրենսդրական դեկրետով սահմանված դրույթների հետադարձ ուժով կիրառումն՝ ի վնաս դիմումատուի, խախտել է Կոնվենցիայի 6-րդ և 7-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքները: Մասնավորապես, դատաքննությունից հետո, որը Դատարանը համարել է անարդար (տե՛ս վերևում՝ 145-րդ պարբերություն), դիմումատուի նկատմամբ նշանակվել է ավելի ծանր պատիժ (ցմահ ազատազրկում), քան այն առավելագույն պատիժը, որը ենթակա էր կիրառման այն պահին, երբ նա իր գործով պարզեցված վարույթի կարգով դատաքննություն իրականացնելու միջնորդություն էր ներկայացրել և որի իրավունքը նրան տրվել էր (երեսուն տարի ժամկետով ազատազրկում):

154. Գործի հատուկ հանգամանքների հաշվառմամբ և Կոնվենցիայի 6-րդ և 7-րդ հոդվածների խախտումը վերացնելու ծայրահեղ

անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Դատարանը, ըստ այդմ, համարում է, որ պատասխանող պետությունը պարտավոր է երաշխավորել, որ դիմումատուի ցմահ ազատագրկումը փոխարինվի սույն վճռում արտացոլված սկզբունքներին համահունչ պատժով, որը երեսուն տարի ժամկետով ազատագրկումը չգերազանցող պատիժն է:

Բ. Կոնվենցիայի 41-րդ հոդվածը

155. Կոնվենցիայի 41-րդ հոդվածով սահմանվում է.

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել:»:

1. Վնասը

156. Դիմումատուն պահանջել է 250,000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում: Նա նկատել է, որ քննարկվող գործում իր՝ երեսուն տարի ժամկետով ազատագրկման պատիժը փոխարինվել էր ցմահ ազատագրկմամբ, որը հանգեցրել էր «բարոյական մահապատժի» և, ավելին, նշանակվել անկախ այն հանգամանքից, որ ինքը ծանր հիվանդ էր:

157. Կառավարությունն այս կետի առնչությամբ դիրքորոշում չի ներկայացրել:

158. Դատարանը կարծում է, որ դիմումատուն անկասկած կրել է ոչ նյութական վնաս: Իր գնահատումը կատարելով արդարության սկզբունքի հիման վրա ինչպես պահանջվում է Կոնվենցիայի 41-րդ հոդվածով՝ Դատարանն այս մասով նրան շնորհում է 10,000 եվրո:

2. Ծախսերը և ծախքերը

159. Հիմք ընդունելով իր փաստաբանի կողմից դուրս գրված հաշիվը՝ դիմումատուն պահանջել է 15,623.50 եվրո՝ Դատարանում կրած ծախսերի և ծախքերի դիմաց:

160. Կառավարությունն այս կետի առնչությամբ դիրքորոշում չի ներկայացրել:

161. Դատարանի կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ հատուցում կարող է շնորհվել դիմումատուի կրած ծախսերի և ծախքերի դիմաց միայն այնքանով, որքանով դրանք իրական և անհրաժեշտ էին և ընդհանուր առմամբ ողջամիտ են (տե՛ս *Belziuk v. Poland*, 25 մարտի 1998թ., § 49, *Ձեկույցներ վճիռների և որոշումների վերաբերյալ* 1998-II):

162. Դատարանը կարծում է, որ իր վարույթի շրջանակներում կրած ծախսերի և ծախքերի համար պահանջված գումարը չափազանցված է և այս մասով որոշում է շնորհել 10,000 եվրո:

3. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

163. Դատարանը գտնում է, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ, ԴԱՏԱՐԱՆԸ՝

1. միաձայն *վճռում է*, որ այն իրավասու է իրեն հանձնված գործը քննել նաև Կոնվենցիայի 6-րդ հոդվածի դիտանկյունից.
2. միաձայն *մերժում է* իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու վերաբերյալ Կառավարության առարկությունը, որի հիմքում ընկած էր այն փաստը, որ դիմումատուն ներպետական դատարաններ Կոնվենցիայի 7-րդ հոդվածի հիմքով ներկայացված իր բողոքները չէր ներկայացրել.
3. ձայների՝ տասնմեկ կողմ և վեց դեմ հարաբերակցությամբ, *վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 7-րդ հոդվածի խախտում.
4. իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու վերաբերյալ Կառավարության առարկությունը, որի հիմքում դրված էր այն փաստը, որ դիմումատուն չէր օգտվել պարզեցված վարույթի կիրառման իր միջնորդությունից հրաժարվելու հնարավորությունից, միաձայն *միացնում է գործի ըստ էության քննությանը* և մերժում այն.
5. միաձայն *վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում.
6. *վճռում է՝*
 - (ա) միաձայն, որ պատասխանող պետությունը պարտավոր է երաշխավորել, որ դիմումատուի նկատմամբ նշանակված ցմահ ազատազրկման պատիժը (տե՛ս վերևում՝ 154-րդ պարբերություն) փոխարինվի այնպիսի պատժով, որը համահունչ է սույն վճռում արտացոլված սկզբունքներին.
 - (բ) ձայների տասնվեց կողմ և մեկ դեմ հարաբերակցությամբ, որ պատասխանող պետությունը, երեք ամսվա ընթացքում, դիմումատուին պետք է վճարի 10,000 եվրո (տասը հազար եվրո) որպես ոչ նյութական վնասի հատուցում՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ.
 - (գ) միաձայն, որ պատասխանող պետությունը, երեք ամսվա ընթացքում, դիմումատուին պետք է վճարի 10,000 եվրո (տասը հազար

եվրո) որպես ծախսերի և ծախքերի հատուցում՝ գումարած դիմումատուից գանձման ենթակա ցանկացած հարկ.

(դ) միաձայն, որ վերոնշյալ եռամսյա ժամկետի ավարտից հետո մինչև վճարման օրը, վերոնշյալ գումարների նկատմամբ պետք է հաշվարկվի պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ փոխառության առավելագույն տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային միավոր.

7. միաձայն *մերժում է* դիմումատուի՝ արդարացի հատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով ու ֆրանսերենով և հրապարակվել է դռնբաց դատական նիստի ընթացքում՝ 2009 թվականի սեպտեմբերի 17-ին Ստրասբուրգում՝ Մարդու իրավունքների պալատում:

Մայքլ Օ'Բոյլ [Michael O'Boyle]
Քարտուղարի տեղակալ

Ժան-Փոլ-Կոստա [Jean-Paul Costa]
Նախագահ

Կոնվենցիայի 45-րդ հոդվածի 2-րդ կետի և Դատարանի կանոնակարգի 74-րդ կանոնի 2-րդ մասի համաձայն՝ այս վճիռն կից ներկայացվում են հետևյալ առանձին կարծիքները՝

(ա) դատավոր Մալինվերնիի [Malinverni]՝ դատարանի մեծամասնության դիրքորոշմանը համընկնող կարծիքը, որին միացել են դատավորներ Կաբրալ Բարրետոն [Cabral Barreto] և Սիկուտան [Šikuta].

(բ) դատավոր Նիկոլաուի [Nicolau]՝ դատարանի մեծամասնության դիրքորոշմանը մասնակիորեն չհամընկնող կարծիքը, որին միացել են դատավորներ Բրացան [Bratza], Լորենզենը [Lorenzen], Յոչիենեն [Jočiené], Վիլլիգերը [Villiger] և Սայոն [Sajó]:

Ժ.-Փ.Կ [J.-P.C.]
Մ. Օ.Բ. [M. O.B.]

**ԴԱՏԱՎՈՐ ՄԱԼԻՆՎԵՐՆԻԻ՝ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ
ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ, ՈՐԻՆ ՄԻԱՑԵԼ ԵՆ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ԿԱԲՐԱԼ ԲԱՐՐԵՏՈՆ ԵՎ ՍԻԿՈՒՏԱՆ**

(Ժարգմանություն)

Համաձայն եմ բոլոր այն փաստարկների հետ, որոնց հիման վրա Մեծ պալատն արձանագրել է Կոնվենցիայի 7-րդ հոդվածի խախտում: Այնուամենայնիվ, ցավում եմ, որ վճռով ավելի մանրամասն անդրադարձ չի կատարվում այն հանգամանքին, որը, իմ կարծիքով, իրենից ներկայացնում է քննարկվող գործի առանձնահատկությունը, մասնավորապես՝ դատախազության վճռաբեկ բողոքն ուղեկցող հանգամանքները:

Այդ հանգամանքները հետևյալն են: Առաջին ատյանի դատարանի դատավճիռը կայացվել է 2000 թվականի նոյեմբերի 24-ին, այսինքն՝ նույն օրը, երբ թիվ 341 օրենսդրական դեկրետը մտել է օրինական ուժի մեջ (տե՛ս վճռի 13-րդ պարբերությունը): Դիմումատուի պնդումների համաձայն, որոնք Կառավարությունը չի վիճարկել, Հռոմի՝ Նախաքննության հարցերով մասնագիտացած դատավորի առջև դատաքննությունն սկսվել է ժամը 10:19-ին: Քանի որ դատավճիռը հրապարակվել է դատախազներից անմիջապես հետո (տե՛ս 81-րդ պարբերությունը), շատ հնարավոր է, որ Նախաքննության հարցերով մասնագիտացած դատավորի որոշումը կայացվել է 2000 թվականի նոյեմբերի 24-ին՝ առավոտյան:

Թիվ 341 օրենսդրական դեկրետը հրապարակվել է նույն օրը, սակայն կեսօրվա ժամերի ընթացքում (տե՛ս 33-րդ պարբերությունը): Հետևաբար, առաջին ատյանի դատարանի կողմից դատավճռի կայացման պահին քննարկվող դեկրետի մասին որևէ մեկը տեղյակ չէր, և խնդիրն այն է, որ օրենսդրական գործիքը չի կարող օրինական ուժի մեջ մտնել մինչև Պաշտոնական տեղեկագրում հրապարակվելը (տե՛ս 34-րդ պարբերությունը):

2001 թվականի հունվարի 12-ին Հռոմի վերաքննիչ դատարան ներկայացված՝ օրենքի կիրառության հարց բարձրացնող բողոքով դատախազությունը պնդել է, որ Նախաքննության հարցերով մասնագիտացած դատավորը պետք է կիրառած լիներ թիվ 341 օրենսդրական դեկրետի 7-րդ հոդվածը, և որ այդ բացթողումը պետք է դիտարկել, որպես «օրենքի կիրառման ակնհայտ սխալի»: Ըստ այդմ, դատախազությունը խնդրել է դիմումատուի նկատմամբ նշանակված պատիժը, այն է՝ երեսուն տարի ժամկետով ազատազրկումը, փոխարինել ցմահ ազատազրկմամբ (տե՛ս 14-րդ և 15-րդ պարբերությունները): Ինչպես գիտենք, այդ դիմումը բավարարվել է Հռոմի՝ երդվյալ ատենակալների կազմով հանդես եկող վերաքննիչ դատարանի կողմից:

Իմ կարծիքով, իրավական որոշակիության, իրավունքի գերակայության և ավելի խիստ օրենքի հետադարձ ուժով կիրառման արգելի սկզբունքներով իշխանություններից պահանջվում է չկիրառել՝ ի վնաս ամբաստանյալի, այն օրենքը, որը դատավճռի կայացման պահին չէր կարող հայտնի լինել:

Պարզեցված վարույթի կիրառման միջնորդություն ներկայացնելու պահին և ընդհուպ մինչև առաջին ատյանի դատարանում վարույթի ավարտը դիմումատուին չէր կարող կանխատեսել թիվ 341 օրենսդրական դեկրետի կիրառման հետևանքները: Ուստի, վերոշարադրյալ հատուկ հանգամանքներում վերաքննիչ դատարանի կողմից՝ դատախազության միջնորդությամբ, նշանակված պատիժն առհասարակ չունեք որևէ իրավական հիմք և հետևաբար, այդ հանգամանքի հաշվառմամբ ևս, հակասում էր Կոնվենցիայի 7-րդ հոդվածին:

**ԴԱՏԱՎՈՐ ՆԻԿՈՒԱՌԻ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ
ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆԸ ՄԱՍՆԱԿԻՈՐԵՆ ՉՀԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ,
ՈՐԻՆ ՄԻԱՑԵԼ ԵՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ԲՐԱՑԱՆ, ԼՈՐԵՆՁԵՆԸ,
ՅՈԶԻԵՆԵՆ, ՎԻԼԼԻԳԵՐԸ ԵՎ ՍԱՅՈՆ**

Մենք պալատը միաձայն համաձայնում է, որ քննարկվող գործով տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում: Վճռի՝ մասնավորապես 6-րդ հոդվածի 1-ին կետին վերաբերող պատճառաբանական մասը, որի հետ լիովին համաձայն ենք, մեր կարծիքով անհրաժեշտ է մեկնաբանել նաև Դատարանի կողմից արդեն ճանաչված և մեծամասնության կողմից 7-րդ հոդվածի 1-ին կետի առնչությամբ քննարկված սկզբունքների լույսի ներքո, քանի որ 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված արդարության խնդիրն ամբողջովին իմաստավորվում է ավելի լայն համատեքստում:

Հանցագործությունների կատարման պահին նախատեսված պատիժը ցմահ ազատազրկումն էր՝ զուգակցված ցերեկային ժամերին մեկուսացմամբ: Պարզեցված վարույթը, որով ենթադրվում էր պատժի մեղմացում, այս պատժին ենթակա հանցագործությունների դեպքում չէր կիրառվում: Այնուամենայնիվ, այն արդյունքում հասանելի էր դարձել: 2000 թվականի փետրվարի 19-ին դիմումատուին նախընտրել էր [պարզեցված վարույթը], իսկ քրեական դատարանը՝ դատախազության համաձայնությամբ, համաձայնել էր կիրառել այն: Գործի քննությունը երկու անգամ հետաձգվել էր, և քննություն չէր իրականացվել մինչև 2000 թվականի նոյեմբերի 24-ը՝ ավելի քան ութ ամիս անց, թեպետ գործով դատաքննության իրականացման և դատավճռի կայացման համար պահանջվում էր ոչ ավելին, քան առավոտյան դատալսումները: Ավելի ծանր պատիժ սահմանող օրենսդրական դեկրետով, որը հրապարակվել էր նույն օրը՝ ավելի ուշ, ենթադրվում էր չեղարկել արդեն արվածը: Հաստատվելով դատարանի կողմից՝ այն հանգեցրել է դիմումատուի նկատմամբ նշանակված պատիժն ավելի ծանր պատժի փոխակերպելով: Հատկապես այս հանգամանքների հաշվառմամբ ենք մենք եզրահանգել, որ արդարությունը բացակայել է:

Չնայած Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետն ամբողջովին բավարարում է այս գործի կարիքները, մեծամասնությունը բավարարված չէ դրանով: Նրանք այն կարծիքին են, որ խնդիրն անհրաժեշտ է դիտարկել հիմնականում 7-րդ հոդվածի 1-ին կետի լույսի ներքո: Նրանք Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին կետը ոչ միայն դիտարկում են որպես ավելի բարենպաստ օրենքի՝ *lex mitior* սկզբունքը ներառող, այլև կարծում են, որ այս գործը հնարավորություն է տալիս լիովին շեղվել Դատարանի նախադեպային իրավունքից՝ 7-րդ հոդվածի 1-ին կետին նոր մեկնաբանություն տալով, որն ավելի համահունչ է ժամանակին:

Մեր կարծիքով 7-րդ հոդվածի 1-ին կետը նման մեկնաբանության հնարավորություն չի տալիս:

Զնայած 7-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված օրինականության սկզբունքի և ավելի բարենպաստ օրենքի սկզբունքի միջև գոյություն ունի թվացյալ բովանդակային կապ՝ մի կապ, որը, հավանաբար, ամրապնդվում է այն հանգամանքով, որ հետագայում ընդունված մարդու իրավունքների գործիքները դրանք դիտարկում են միասին, դրանց միջև առկա է կենսական տարբերություն: Առաջին սկզբունքը կիրառվում ավելի բարձր մակարդակում, քան երկրորդը: Այն իրենից ներկայացնում է իրավունքի գերակայության բաղկացուցիչ մաս: *Nullum crimen nulla poena sine praevia lege poenali*՝ որևէ մեկը չի կարող դատապարտվել կամ պատժի ենթարկվել գործող քրեական օրենքի բացակայության պայմաններում: Ավելի հիմնարար երևույթ գոյություն չունի: Այն բացարձակ է և անխուսափելի: Այն ազատության կարևոր պայման է: Այդ պատճառով էլ 15-րդ հոդվածով 7-րդ հոդվածից շեղվել չի թույլատրվում: *Lex mitior* սկզբունքն իրավունքի գերակայության պահանջի բաղկացուցիչ մաս չէ, ոչ էլ կարող է դիտարկվել, որպես այդ սկզբունքի ընդարձակում կամ հետևանք: Այն այլ բնույթի նորմ է: Դրանով արտահայտվում է մի ընտրություն, որն արտացոլում է քրեական իրավունքի համատեքստում տեղի ունեցած սոցիալական զարգացումները: Այն սահմանում է քրեական իրավունքի շրջանակը՝ պահպանելով այն առավելությունները, որոնք ամբաստանյալները ձեռք են բերում հանցագործության կատարումից հետո ընդունված և քննության փուլում գտնվող գործի նկատմամբ կիրառելի օրենքների արդյունքում: Որևէ հատուկ դրույթի բացակայության պայմաններում, նշվածը մնում է քրեական արդարադատության ոլորտում պետության ունեցած հայեցողության շրջանակում որդեգրվող քաղաքականության կամ կատարվող ընտրության հարց:

Ակնհայտ է, որ 7-րդ հոդվածի 1-ին կետի ընդունման պահին *lex mitior* սկզբունքը չի ներառվել դրանում և ոչ էլ առաջարկվել է, որ այդ ժամանակ որևէ մեկը կարծել է, թե դրա վրա տարածվում էր *nullum crimen nulla poena sine lege* սկզբունքը, որը հաճախ հիշատակվում է այս կրճատ ձևով: 1950 թվականին ընդունված Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին կետի մշակման հիմքում դրվել է 1948 թվականին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 11-րդ հոդվածի 2-րդ մասը, որի հետ այն գրեթե նույնական է: 7-րդ հոդվածի 1-ին կետի մշակման աշխատանքներով [Փրանսերենում՝ «Travaux Préparatoires»] բացահայտվում է (7-րդ էջ, հարց (5)), որ *lex mitior* սկզբունքը դրան ավելացնելու հնարավորությունը քննարկվել էր, սակայն դրանից հրաժարվել էին: Հատկանշական է, որ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի համապատասխան դրույթը մշակելիս՝ նախնական փուլի նախագծում ներառված էր միայն *nullum crimen nulla poena sine lege* սկզբունքը,

նույնը, ինչ Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին կետում: *Lex mitior* սկզբունքը ներառելու առաջարկն արվել է ավելի ուշ, որի արդյունքում էլ լրացվել է հետևյալ երրորդ նախադասությունը այն կյանքի կոչելու նպատակով.

«Եթե հանցագործությունը կատարվելուց հետո օրենքով ավելի թեթև պատիժ է սահմանվում, այդ օրենքի գործողությունը տարածվում է տվյալ հանցագործի վրա:»

Տարբեր տեսակետներ են եղել, թե արդյոք նման կերպ վարվելը ճիշտ էր: Մարք Ջ. Բոսսույթի [Marc J. Bossuyt] պատրաստած ուղեցույցը, որը վերաբերում է «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի մշակման աշխատանքներին [Guide to the *Travaux Préparatoires*], պարունակում է դեպքերի հետաքրքիր շարադրանք՝ ներգրավված տարբեր գործոնների մասին.

«Մարդու իրավունքների հանձնաժողով, 5-րդ գումարում (1949), 6-րդ գումարում (1950), 8-րդ գումարում (1952)

A/2929, Գլուխ VI, § 95. ներկայացվել է այն պնդումը, որ 1-ին պարբերության երրորդ նախադասությունը հակասում էր երկրորդ նախադասության հիմքում ընկած ենթադրությանը, այն է՝ կիրառման ենթակա պատիժը պետք է լիներ դրա նշանակման պահին գործող օրենքով սահմանված պատիժը [E/CN.4/SR.159, §§ 46-48 (USA); E/CN.4/SR.324, էջ 4 և էջ 7 և էջ 15 (GB), էջ 5 (USA), էջ 9 (IND)]: Ասվել է նաև, որ անկախ այն հանգամանքից, որ երրորդ նախադասությամբ հետապնդվող նպատակն արժանի էր գովեստի, դաշնագրով դրան նվիրված դրույթ նախատեսելը նպատակահարմար չէր, քանի որ տպավորություն կատեղծվեր, որ դատապարտյալներին՝ դատապարտվելուց հետո օրենքում կատարված ցանկացած փոփոխությունից օգտվելու պահանջ ներկայացնելու իրավունք էր շնորհվում [E/CN.4/SR.112, էջ 3 (GB), էջ 5 (GCA); E/CN.4/SR.324, էջ 5 (USA)]: Ներկայացվել է այն պնդումը, որ դաշնագրի անդամ պետությունների գործադիր իշխանությունները պետք է պահպանեն բացարձակ հայեցողություն՝ այդպիսի անձանց նկատմամբ հետագայում ընդունված օրենքների առավելությունները կիրառելիս [E/CN.4/SR. 159, §§ 61-62 (USA), § 65 (GB), § 72 (RCH); E/CN.4/SR.324, էջ 16 (GB)]: Ի հակադրություն այս տեսակետներին, ներկայացվել է այն նկատառումը, որ ժամանակակից քրեական իրավունքում կար միտում անձին թույլատրել օգտվել ավելի մեղմ պատժից, որը կարող էր նշանակվել նրան մեղսագրվող հանցագործության կատարումից հետո [E/CN.4/SR.112, էջ 4 (USA), էջ 6 (RCH) էջ 7 (SU); E/CN.4SR.159, § 83 (ET), § 86 (U), § 88 (F); E/CN.4/SR.199, § 151 (GB), § 153 (F), § 156 (ET); E/CN.4/SR.324, էջ 4-5 և էջ 8 (SU), էջ 5(B), էջ 9 (YU), էջ 11 (RCH) և (F), էջ 12 (PL), էջ 14 (IL)]: Նոր և ավելի մեղմ պատիժներ սահմանող օրենքները հաճախ արտահայտում էին հասարակության վերաբերմունքի որոշակի փոփոխությունը քննարկվող հանցագործության նկատմամբ [E/CN.4/SR.112, էջ 8 (F); E/CN.4/SR.324, էջ 7 (RCH)]:»:

X. v. the Federal Republic of Germany գործում (թիվ 7900/77, 1978 թվականի մարտի 6-ի որոշում, *Որոշումներ և Ձեկույցներ* (ՈՁ) 13, էջ 70-72) Հանձնաժողովը քննարկման առարկա է դարձրել և մերժել այն փաստարկը, համաձայն որի Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին կետին պետք է տրվեր այնպիսի մեկնաբանություն, որ այն ընդգրկեր նաև առավել բարենպաստ օրենքի սկզբունքը: Դիմումատուին մեղավոր է

ճանաչվել հարկային նորմի խախտման համար, և նրա նկատմամբ նշանակվել է տուգանք: Նա բողոքարկել է: Մինչև ներկայացված բողոքի քննությունը նրա դատապարտման հիմքում դրված նորմը ուժը կորցրած է ճանաչվել: Նա պնդել է, որ իրեն այդ փոփոխությունից օգտվելու հնարավորություն պետք է տրվեր: Նա պնդել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 7-րդ հոդվածի խախտում և, որպես հիմնավորում, հղում կատարել «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» Միավորված ազգերի կազմակերպության միջազգային դաշնագրի 15-րդ հոդվածին: Այս առնչությամբ օգտակար կլինի նշել, որ դեռևս 1969 թվականին ընդունված «Մարդու իրավունքների մասին» ամերիկյան կոնվենցիան, որը չնայած օրինական ուժի մեջ էր մտել 1978 թվականի հուլիսի 18-ին՝ այդ գործով կայացված որոշումից մի քանի ամիս անց, նույնպես պարունակում էր նախադասություն, որով ամրագրված էր ավելի բարենպաստ օրենքի սկզբունքը: Հանձնաժողովը համառոտ որոշմամբ մատնանշել է ակնհայտը և նշվածն արտահայտել հետևյալ կերպ.

«Սակայն Կոնվենցիայի 7-րդ հոդվածով Միավորված ազգերի կազմակերպության դաշնագրի 15-րդ հոդվածի 1-ին մասով (*in fine*) սահմանված դրույթին համանման դրույթ չի նախատեսվում, որի հիմքում, ավելին, դրված է այլ կանխավարկած, քանի որ դրանով երաշխավորվում է դատապարտյալի իրավունքն օգտվել հանցագործության կատարումից հետո ընդունված օրենքով նախատեսված ավելի մեղմ պատժի կիրառումից: Քննարկվող գործում, դիմումատուին մեղսագրվող արարքների մի մասը ինչ-որ չափով այլևս հանցագործություն չէ: Այնուամենայնիվ, իրավախախտման կատարման պահին, ներպետական օրենսդրության համաձայն՝ դիմումատուի արարքը Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով համարվել է հանցագործություն, հետևաբար այս բողոքը (ևս) ակնհայտ անհիմն է...»

Դատարանը, բավականին վերջերս, կիրառել է *X. v. the Federal Republic of Germany* գործով կայացված որոշումը (վերևում) *Ian Le Petit v. the United Kingdom* (dec.), թիվ 35574/97, 5 դեկտեմբերի 2000թ. և *Zaprianov v. Bulgaria*, (dec.), թիվ 41171/98, 6 մարտի 2003թ. գործերում, որոնցում կտրականապես նշվել է.

«Կոնվենցիայի 7-րդ հոդվածով չի երաշխավորվում օրենքում կատարված հետագա և բարենպաստ փոփոխությունն ավելի վաղ կատարված հանցագործության նկատմամբ կիրառելի դարձնելու իրավունք:»:

Քննարկվող գործով առաջացած կարծիքների բախումը չպետք է վերագրել Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին կետի մեկնաբանության հարցում մեր մոտեցումների տարբերությանը: Բոլորս էլ բացահայտ կերպով կողմնակից ենք միջազգային վերաբերելի կանոններին, որոնք ամրագրված են «Միջազգային պայմանագրերի վերաբերյալ» 1969 թվականի Վիեննայի կոնվենցիայի 31-րդ և 32-րդ հոդվածներով, և 7-րդ հոդվածի 1-ին կետի վերաբերյալ մեր՝ որպես փոքրամասնության որդեգրած մոտեցումը, կասկածի տակ չի դնում Դատարանի նախադեպային իրավունքը, որին համառոտ կերպով հղում է անում մեծամասնությունը՝ նախկինում կայացված որոշումներն

անհրաժեշտության դեպքում փոփոխելիս կամ դրանք փոփոխվող պայմաններին համապատասխանեցնելիս կամ նոր չափանիշների շուրջ ձևավորվող փոխհամաձայնությանը արձագանքելիս, քանի որ, ինչպես հաճախ շեշտադրվում է, Կոնվենցիան կենդանի գործիք է, որը պահանջում է դինամիկ և զարգացող մոտեցում, որը իրավունքները դարձնում է գործնական և արդյունավետ, այլ ոչ թե՝ տեսական և պատրանքային: Սակայն ոչ մի դատական մեկնաբանություն, որքան էլ այն նորարարական լինի, չի կարող լիովին գերծ լինել սահմանափակումներից: Ամենակարևորը, անհրաժեշտ է պահպանել կոնվենցիոն դրույթների սահմանները: Ինչպես Դատարանն ընդգծել է *Johnston and Others v. Ireland* (18 դեկտեմբերի 1986թ., § 53, Շարք Ա թիվ 112) գործով վճռում.

«Ճիշտ է, որ Կոնվենցիան և կից Արձանագրություններն անհրաժեշտ է մեկնաբանել ներկայում գոյություն ունեցող պայմանների լույսի ներքո (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, վերոնշյալ *Marckx-ի գործով վճիռը*, Շարք Ա թիվ 31, էջ 26, պարբ. 58): Սակայն Դատարանը չի կարող զարգացող մեկնաբանման միջոցով այս գործիքներից բխեցնել մի իրավունք, որն ի սկզբանե դրանցում ներառված չի եղել: Նշվածը մասնավորապես կիրառելի է, երբ բացթողումը միտումնավոր էր:»:

Սա այն հարցն է, որի առնչությամբ Դատարանը պետք է հատկապես զգույշ լինի: Այնուամենայնիվ, թեև քննարկվող գործով նման բան չի պահանջվում, մեծամասնությունը շարունակել է գործը քննել 7-րդ հոդվածի 1-ին կետի լույսի ներքո և վերջինս կիրառելու նպատակով վերաշարադրել այն՝ նրանց կարծիքով ճիշտ տարբերակին համապատասխանեցնելու համար: Ամենայն հարգանքով, սա հատում է սահմանները: